


12116

891.
--

u\$





881.99
Z-42



ՊԱՏՄՈՒԱԾԻ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա Հ Հ Չ

ԸՄԸՔԵԼ ՅԱՐՈՒԹԻՒՆԵՐՆԻ

НАРОДНЫЯ ПѢСНИ

АРАКЕЛА АРУТЮНЯНА

2003

Բ Ա Գ Ո Ւ ♦ Б Ա Կ Ս

Տպարան „Արամազդ“ ♦ Типографія „Арамаздъ“

1913

ՊԱՏՄՈՒԾՎՔ և ԺԱՂԱԿՐԴԱԿԱՆ

ԲԱՆԱՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Աղող Առաքել Յարուբինեանի

НАРОДНЫЯ ПѢСНИ

АРАКЕЛА АРУТЮНЯНА

Բ Ա Գ Ա Ւ

Տպարան „Արամազդ“

Б А К Ս

Տիպոգրիա „Արամազդ“

1 9 1 3

F3682 - Col. L.

Дозволено цензурою, 30-го Ноября 1913 года.



1556 - 84



ԱՅՐԻ ԱՐԱԲԵԼ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ



ՊԱՏՄՈՒԱԾԻ

Մինեաց գուտովի Պատմանի մինակի Զափնի գիւղի
բնակիչ Սիմեօն Թումանյանի տորիս:

Սրանից քանի տարիներ առաջ այդ Զափնի
գիւղում տպրում էր մէկ թուման անւանի մարդ:
Նա ուներ վեց տղայ: Առաջինն էր Բալասան,
Դրիգոր, Ագամ, Խաչատուր, Սիմէօն և Աղաջան:
Այդ մարդու տղէքը Ագամն ու Սիմէօնն գնացին
օտարութիւն փող վաստակելու 1877 թւին: Քանի
տարի ծառայեցին Շուշի քաղաքում, այդ տեղ
նրանք լսեցին, որ ոռւսաց կառավարութիւնը
պատերազմ է սկսում Միջին Ասիայի բնակիչ
մահմեդական ցեղերի հետ: Պատերազմի վայրում
աւելի լաւ փող վաստակել հաշւելով՝ երկու եղ-
քայրք ձանապարհեցին դէպի Միջին Ասիա:
Համնելով պատերազմի վայրը, նոքա բաց արին
խանութ և մի քանի ժամանակում նոքա ձեռք
բերին բաւականի աշխատանք. աշխատած փողը
ոլինդ պահելու համար, Սիմէօնը երկու հազար
մանէթ միւս եղբօրից ծածուկ պնդացնում է
Ճոր գլխարկի մէջ ու էլի սկսում են տոհտութը

և էլի առաջւանից աւելի շարունակում են առետուրը ու աւելի աշխատել Գենէրալ Լազարել Ադամից հարցրեց թէ, որտեղացի ես նա էլ առաց «Ղափանու վիճակիցն ենք»: Ուստի Լազարելը խղճաց Ադամին և մինչև անգամ իւր հետ վերցրուց բժիշկներն գնացին Սիմէօնի մօտ և քննեցին տեսան, որ ոչ մի հիւանդութիւն չունի, առողջ է, միայն թէ երազումը սիրահարւել է աղջկայ հետ և այդ մասին մտածում է ուստի լաւ կանենք, որ ուզարկեք հայրենիք: Երբ որ բժիշկը այսպէս խորհուրդ տւաւ, Ադամը յայսնեց բոլոր երկրացի կամ գիւղացի աղորցը. մի օր բոլոր ծանօթ, կամ գիւղացիք հաւաքւեցին և Կրամաւորակ աւանում Սիմէօնին շողենաւ նըստեցրին և բարի ճանապարհ. մաղթեցին ու ճանապարհ զրին դէպի հայրենիք: Թող Սիմէօնը անփորձ համնի հայրենիք, մենք դառնանք դէպի Նուպարը:

Երբ որ Սիմէօնն երազումը, ուզում է, որ զրգի Նուպարին, Նուպարն էլ նոյնպէս յիշելով երազը և տեսնելով, որ Սիմէօնը ուզում է զրգէ իրան, նա էլ զարհուրելով յանկարծ զարթնում է և տեղից վերկենալով, որ փաղչի, բայց քւորը ծամը ոտովը ընկնելով քոյրն էլ զարթնելով ոկտում է լաց լինել որը քնած էր փոքրիկ քոյր Մարգարիտ հետ: Մարգարիտը վայ վայ անելով սկսեց լաց լինել. հայր ու մայր, որ

մօտիկ քնած էին, հարցըին՝ թէ «Նուպար, այդ ի՞նչ է, ի՞նչու ես Մարգարիտին լացացնում, Նուպարնն իրան պահեց և խօսքը փոխելով ասաց: «Ոչինչ չկայ, Նարգիզ հորթն էր յանկարծ Մարգարիտի ոտը կոխեց, նա էլ լաց եղաւ: Առաւոաը երբոր լուսացաւ, երկու քոյրն էլ գնացին այգի: Ճանապարհին Մարգարիտն ասաց: «Նուպար ի՞նչու դիշերն ինձ կոխոտեցիր յանկարծ հիմայ ոտ ու ձեսս ցաւում է, գժւել էիր, թէ ի՞նչ բան էր քեզ պատահել, ասա ճշմարիտը:

Նուպարն ասաց. Եթէ ուզում ես ցաւս ու դարդս տսեմ, պէտք է քեզ սազով հասկացնեմ, ուրիշ կերպ չեմ կարող հասկացնել: Մարգարիտը զարմացաւ և հարցրուց թէ՝ քոյրիկ ի՞նչու ես ասզով ասում, միինէ գու աշուղ ես, որ ստզով ես ուզում խօսել հետս. Նուպարն ասաց Եթէ իմանաս այս գիշերւայ իմ տեսիլքս և այս գիշերւայ ինձ տւած սէրս, գեռ աշուղից էլ կրկնակի եմ. որովհետև Սիմէօնի սէրն էլ մտել էր Նուպարի սիրով, և իւր ոսկեթել ծամերը սազ շինելով, առաւ ձեռքը և սկսեց երգով պատմել այս գիշերւայ տեսածը իւր քւորը:

Այս գիշեր մէկ տղայ եկաւ
Մօտս նստեց էլի գնաց,
Զեռքիցը բունելուց փախաւ.
Սիրտս շատ ցաւոտ մնաց:

Ինչ կլինէր մէկ էլ տեսնէի
Սրտիս ցաւերը պատմէի
Նրա քաղցր ձայնը լոէի
Յետոյ նոտէի կերակուր հաց:

Բարի լինի իմ երազս,
Թևին վերայ լինի վիզս,
Չեռքովը քաշի հիւսած մազս
Քրտինքովդ թող լինեմ թաց.

Նուպարն եմ քեզ տւի սէրս
Եթէ չի տան հերս ու մէրս
Այսուհետեւ գու ես տէրս
Մէկ մէկ սրտիս կոճակը բաց:

Երգը վերջացնելուց յետոյ Մարգարիտը մնաց
Պարմացած. Նուպարն ասաց: Փոյրիկ, տեսնում ես,
որ այժմ աշուղից էլ անց եմ. սիրահարիս սիրովը
վառւում եմ այսուհետեւ ես ոչ մի տղի խօսք
չեմ տալ մարդու գնալու, միայն կսպասեմ այն
չկին, որ երազումս տեսել եմ. քեզ մարդու
կտամ, բայց ես կսպասեմ նա ինձ որտեղ էլ լինի
կդտնի: Թող երկու քոյլերը խոսան, մենք դառ-
նանք դէպի Սիմէօնը: Սիմէօնը կրամնաւովսէ
ճանապարհւեց Կասղից ծովս անփորձ անցաւ ու
հասաւ Բագու, այդ տեղ Փուրկոն վարձեցին մինչև
Շուշի քաղաքը, որպէսզի Փուրկոնով Բագւից մինչև

Շուշի Փուրկոնով գան, որովհետեւ այն ժամանակ
Արկաթուղի չկար: Բագւից ճանապարհւեց իւր
երկրացի կամ զիւղացի ընկերների հետ հասան
թուռ գետից մօտիկ Աղջարագիլ անւանի անա-
պատը այդ զիշեր մնացին այդ տեղ հանգստանալոււ
Սիմէօնը զիշերը երազումը տեսաւ, որ Նուպարը
մի փունջ մանուշակ ձեռքին բռնած բերաւ մօ-
տացրեց Սիմէօնին և ասաց: Հոտ տու Սիմէօն,
Սիմէօնը ձեռքը մեկնեց, որ մանուշակի փունջը
առնի, բայց Նուպարը փունջը չը տւաւ ու փա-
խաւ: Սիմէօնը յետեկից ընկաւ թէ բռնի, չը կա-
րողացաւ համնել: Ամբողջ զիշերը Սիմէօնը
Նուպարի ստերը տեսնելով մինչեւ առաւոտը
վաղէ վազ էր անում Աղջարագի անապատումը:
Երբ որ լուսացաւ Փուրկոնչիքը և ընկերները պատ-
երը որ լուսացաւ Փուրկոնչիքը թուրքերին սպասել տւին,
մէօնն չկայ: Փուրկոնչիքը թուրքերին սպասել տւին,
որ իրանց ընկերների մէկը չկայ, ման գան, փըն-
որեն ճարեն, որ յետոյ ճանապարհւեն:

Ծնկերները շատ ման գտնուց ոչինչ չգտան,
վերջը պատահեցին մի քանի հովիւների, պատ-
մեցին իրանց մանդալու պատճառը հովիւներին
և վերջումն էլ մի քանի մանէթ փուղ իսոսացան
վերջիներիս որպէս զի նրանք տեղին ծանօթ
լինելով միասին վնարեմ սիրոյ համար կորած
Սիմէօնին: Հովիւները վերցնելով իւրաց հովական
շները Սիմէօնի ընկերների հետ սկսեցին վնարել:

Երկար մանդալուց յետոյ, վերջապէս գտան
Սիմէօնին շուտ չնորհակալութիւն յայտնելով
հովհաներին և տալով խոստացած փողը, Սիմէօնին
վերցրեցին եկան, փուրկոն նստեցին ու ճանապարհ-
ւեցին դէպի Շուշի, Շուշի հասնելուց, Սիմէօնը
իջնանում է դարբին Թէոսի տանը, որի կինը
Սիմէօնի մօտիկ ազգականի աղջկն էր և որի
անունն էր «Փաթի Աքեր»: Այդ աեղ քանի օր
մնալուց, յայտնում են Ղափանը Զափնի գիւղը,
թէ «Սիմէօնը Միջին Ասիայի կռւի դաշտից եկել
է մեզ մօտ է ապրում: Սիմէօնի մեծ եղբայր
Բալտանը ճանապարհում է գալիս Շուշի և
եղբօր վերցնում, տանում իւր հետ. Սիմէօնը տուն-
հասնելուց, ծնողները բոլոր ընտանիքը և բարե-
կամները տեսնում են, որ միանդամայն խելագարի
է նման, ինչքան աղաչում են խնդրում են, «
Ի՞նչանակութիւն չի լինում և Սիմէօնը ոչոքի
խօսքը չի լսում: Ի՞նչքան բաղդ բացողներ են
գալիս Սիմէօնին առողջացնելու, քանի քանի
դրանք են անիլ տալիս, քանի անզամ են տանում
զանազան տեղերի օջաղներ, բայց ոչ մի տեղից
մի օգնութիւն չի լինում. և յոյսները մնում էր
կտրւած ամբողջ մի տարի այսպէս մնում է:

Մի օր Սիմէօնի հայր Թումանը պատահում
է իրանց մօտի գիւղացի աշուղ Առաքել անունով
մի բարեհողի մարդու, որի հետ և առաջուց
էլ սերութիւններ է լինում, Թումանը սկսում է

իւր որդու դարգերից խօսալ աշուղ Առաքելի
հետ և թախտանձում թէ ինչու չես բաւականի
ժամանակ է մեր տունը գալիս: Առաքելը ճարը
կտրւած ասում է: «Թուման Սիմէօնի երկիւղից
չեմ գալիս, վախենում եմ թէ սազս կոտրի.
Վերջը Թումանը շատ շատ խնդրւելուց աշուղ
Առաքելը ժամանակ է տալիս, որ կուգամ: Ժա-
մագրած օրը աշուղ Առաքելը ճանապարհում է
դէպի Թումանի տուն:

Այդ աեղ հաց ուտելուց խմելուց յետոյ,
յանկարծ Սիմէօնն ասում է թէ սազը բերէք
տւեք վարպետ Առաքելին թող ածի: Մինչև Առա-
քելի սկսելը Սիմէօնն ինքն վերցնում է սազը և
տեսնենք ինչ է ասում և հանդիսականներն ինչ
են լսում:

Սուրբ Սարգիսը ինձի ծածուկ ասել է.
Իմ լսածներս չեմ ուզում ասեմ,
Ականջներս բաց է իսկոյն լսել է
Իմ լսածներս չեմ ուզում ասեմ:

Հայր Թուման լսիր իմ սազին սասը
Իմ ձեռքովս կանեմ թշնամուն եասը.
Սուրբ Սարգիսը տւաւ այն ոսկի թասը
Այն թասումը բան կայ, չեմ ուզում ասեմ:

Սիմէօնին ցաւը հայր որ իմանա,
Նմանապէս եթէ մայրս իմանայ,

Իրանց համար իսկոյն ցաւ կստանա,
Ուզում եմ ես լոել չեմ ուզում ասեմ:

Հայրը կամ մայրը խնդրւեցին և աղաչեցին
թէ սրդի սրտիդ բոլոր ցաւերը կամ դարդերդ
ասա, մի ամանչիք մենք շատ ուրախ կլինենք:

Վախենում եմ հայրիկ Սիմէօնին խանդարէք
Թշնամուս գլուխը իսկոյն դուք քարէք
Կրամնաւոգսկում տեսածս նուպարը ճարէք,
Նա է իմ ցաւ վերջնականը կասեմ:

Երբ որ Սիմէօնը իւր միտքը պարզ յայտնեց,
Բոլորը իմացան որ խելագարւելու պատճառը
սիրահարութիւնն է, Ուստի հանգստացնելու և
խելքի բերելու համար մի աղջկայ լաւ հագցրին
և բերան Սիմէօնի մօտ ու ասացին, թէ Սիմէօն
քո Կրամնաւոգսկում երազումդ տեսած աղջիկը
արդէն բերել ենք և այս տեղ է և կարող ես
հիմա տեսնել ու հանգստանալ: Բերին աղջկան
մօտացրին, Սիմէօնն նայեց տեսաւ, որ նա չէ կամ
թէ հասակաւ էլ բարձր է, ասաց: Իմ տեսածս
աղջիկը սա չէ նա փոքր էր իսկ դա մեծ է. ծնող
ներն ասացին: Արդէն տարիուկէս է, որ չես տեսել
այսքան ժամանակումս էլ այսպէս մեծացել է:
Այս տեղի հաւաքւաց պառաւ կանայք շատերն
ուզում էին, որ Սիմէօնին մի կերպ համոզացնեն
որ պսակւի այս ցոյց տւած աղջկայ վերայ, կամ

թէ կարողանան աւելի լաւ հաստատեն, որ սա է
նոյն երազում տեսած աղջիկը: Այստեղ Սիմէօնն
տեսաւ որ ծնողների կամ հաւաքւած պառաւների
միաքները ուրիշ է, ուզում են որ մի անգամից
իրան խաբեն, բայց չլսեց ծնոկած ու պառաւ
կանանց այն սաղն առաւ ձեռքը և սկսեց ներկայ
եղողներին աւելի լաւ հասկացնել իւր անխիզգ
սիրահարութիւնը:

Աչքեր բաց արի փորացաւ որ պառաւ
Զեր փորցելի մարդը, իմաց, որ ես չեմ
Զեզ տեսնելուց հոգիս սրտումս սառաւ,
Զեր խօսքերը ինձի գալիս է ընդգէմ:

Զեր բերած աղջիկը ձեր մօտ մնայ,
Մեղքից հեռու կացէք գատաստան կայ,
Այդ աղջիկը եօթանասուն թւականայ,
Ինձանից հարցնէք ուզիղը կասեմ:

Դուք էք մեր միջումը պառաւ սատանայ
Դրան մասը քաշեմ չուզուն մատանայ
Փորացաւ էր, պառաւներ դա էլ մէկ բանայ
Սատանի փորցեր ես ինչպէս լսեմ:

Նայեցէք Սիմէօնին, իւր ձեռքին սազին,
Պառաւը կը նստի սատանի պոչին,
Բերել էք ինձ համար մեր ամունց թաղին
Դա իմ քոյրս է պէտքէ ես լսեմ:

Երգը վերջացնելուց յետոյ օրիորդ Թաղապիւլը, որ իւր հօր եղբօր աղջիկն էր, եկաւ Սիմէօնի ձեռքը համբուրեց և ասաց: Իմ հօրեղբօր Թուման ապօրը ունի վեց տղայ, բայց աղջիկ չունի ես լինեմ ձեր քոյրը դուք էլ իմ եղբայրս և այսուհետեւ էլ կազօթեմ Աստուծուն, ու դու էլ արժանանաս երազումդ տեսած նուպարին: Մի քանի օր անցնելուց յետոյ սիրով վառւած Սիմէօնը ուզեց, որ որտեղ որէ ման գայ և իւր սիրածը ճարի այդ պատճառով էլ մի օր ծնողներին ասաց. Հայր իմ և մայր իմ կարաւան է գնում Շուշի քաղաքը. ուստի իմ ծնողները չի յօժարւելով մի առաւօտ ծնողներից թծածուկ ճանապարհուելով ուզում էր գնալ սիրածը որոնելու. Մայրը իմանալով եկաւ ճանապարհին որդու առաջը կարեց և շատ խնդրեց, որ չի գնայ. ուստի մօրը խնդիրը չի մերժելու համար սազն առաւ ձեռքը և սկսեց երգել:

Մայրիկ կաթդ արժան արա,
Չեմ կարող մնալ գնում եմ
Ինձ համար դու աղօթք արա,
Չեմ կարող մնալ գնում եմ:

Մայրը.

Որդի դու այդ ինչ ես ասում,
Առանց քեզի ես կը մեռնեմ,

Միթէ իմ խօսքս չես լսում,
Առանց քեզի ես կը մեռնեմ:

Տղան.

Դու առանց ինձի ես մեռնում,
Ես առանց նուպարն եմ մեռնում,
Դիշեր ցերեկ ցաւ եմ քաշում,
Չեմ կարող մնալ գնում եմ:

Մայրը.

Գիշերը քնից ես զրկւեցի
Փորցանք ցաւից քեզ պահեցի.
Մըմնջալով օրօրեցի,
Առանց քեզի ես կմեռնեմ:

Տղան.

Սիմէօնին խօսքին յարմարը,
Սրտիս ցաւին չլինիլ ճարը.
Ղազարի աղջիկ նուպարը,
Նրան տեսել եմ, գնում եմ:

Մայրը.

Մարջան էլ չես կարող խօսել,
Էլի պէտքէ դու սպասես,
Օրհնեմ քեզ փափազիդ համնես
Այն օրհնանքը քեզ, սպասում եմ:


Այս խօսքերը վերջացնելուց յետոյ որդին
համբուրեց և խնդրեց, որ չի հակառակւի և օրհնի
ծնողական օրհնանքով ու ճանապարհ գնի, մայրը
համբուրեց որդուն ճակատը օրհնեց և ճանապարհ
դրեց ասելով: Որդի Աստուած քեզ ինձ է տւել և
ես էլ քեզ բախշեցի Աստուծուն: զնա որդի և
արժանացիր քո սրտիդ սիրածին: Սիմէօնը ճա-
նապարհւեց, հասաւ էրկենաց գիւղի գլխի ազգբին
երեսը լւաց, մնաս բարե ասաց ու անցաւ կա-
րամաքարին գիւղը, անցաւ Զէւայ գիւղը հասաւ
քիւրդաբնակ Խալաջ գիւղը, այդ տեղից անցնելով
հասաւ Ղափանի գաւառի գիթ Բարդուշաթ գետին,
տեսաւ, որ գետը ուղիղ, որ գժւած է էնքան
վարարել էր, որ մինչեւ անգամ թեաւոր թռչունը
սիրտ չէր անել անցնել վրայով: գետի եզրին
նստեց ու սկսեց լաց լինել, բայց էլի՛ չը յոյնա-
հատւեց և ինքն իրան սիրտ գնելով ասաց: Զէոր
ի՞մ այս գործում Աստուծոյ մատը կայ և Աստու-
ած ինձ չի մոռանալ, թէկուզ առաջս էլ պատահի
կլակ դարձեալ յոյս ունեմ, որ պէտքէ ազատւեմ:
Ուստի սազն առնելով սկսեց կանչել Աստուծոյ,
որ իրան անփորձ անցկացնէ, տեսնենք ինչ է
երգում:

Աստուածդդ կըսիրես Բարդաշատ գետ
Առաջս մի կտրիր թող անցնեմ ես,
Անէծք կտամ, կնկնի քո վրէդ.
Առաջս մի կտրիր թող անցնեմ ես:

Սուրբ Սարգիսը ասեց ինձ չը մոռանաս,
Դու միշտ մտիդ պահիր ինձ չը ուրանաս.
Աստուած կը կանչեմ իսկոյն կը չորանաս,
Առաջս մի կտրիր թող անցնեմ ես:

Սիմէօն եառանգով կանչիր Տաթևու աջը
Քեզ օգնական կլինի այն ոսկի խաչը.
Յիսուս Քրիստոսը քեզ անի փուչ,
Առաջս մի կտրիր թող անցնեմ ես:

Երգը վերջացնելուց յետոյ ընկաւ մտածմուն-
քի մէջ. շատ մտածեց, յետոյ նինջ ընկաւ Սիմէօնի
աչքերին, սազը գրաւ գլխի տակին ու սկսեց քնել,
քաղցր քնած ժամանակը մի երեսի իշխան մարդ
եկաւ Սիմէօնի գլխի վերե կանգնեց և կանչեց.
Վեր կաց տեսնեմ ուր ես զնում. Սիմէօնը վեր
թռաւ տեղից, տեսաւ մոտը կանգնած մի հսկայ
տղամարդ ոսկէ սուրը կապած և մի թամքած
սև նժոյգ տակին. ասաց ինչ կը հրամայես, պա-
րոն. պարոնն ասաց, որտեղ ես ուղում գնալ.
Սիմէօնն ասաց. Գնում եմ Շուշի. բայց գետը
որընթաց զնում է, երկիւղ եմ անում անցնել:
Պարոն ձիուն նստացրեց անցրուց գետը: Զին
էնպէս անցկացաւ, որ Սիմէօնին աչքին գետը
չորացած երեաց. Սիմէօնը իջաւ ձիուցը, շնորհա-
կալութիւն յայտնեց. ձիաւորին էլ թողեց ու գնաց:
Սիմէօնը փառք տւաւ Աստուծոյ, որ այսպէս
շուր օգնութեան հասաւ, ճանապարհւեց հասաւ.



Ղարաքահա անւանեալ տեղը. խաշնարածները
իրանց անասուններին էին պահում: Խաշնարած-
ների շները Սիմէօնին տեսնելով յարձակւեցին
Սիմէօնի վրայ, քիչ էր մնացել, որ ուզում էին
պատառ պատառ անէին, բայց Սիմէօնը ունէր
մի թլիմսի նման աղօթք ասելուց իսկոյն
շները հեռացան նրանից և ոչ մէկը էլ մի ձայն
չը հանեց, կասես թէ շները առաջուց Սիմէօնին
սովոր էին: Այդտեղից ճանապարհուելով եկաւ
հասաւ Հաքարի անւանի Արիւն Սրբու դետին.
այդ գետն էլ անցնելով ճանապարհուեց՝ երեկոյեան
հասաւ Մալիխալափ անւանեալ իջևանատունը
դիշերը մնալով այդ իջևանատանը, առաւօտը Աս-
տուծոյ անունը տալով ճանապարհուեց դէպի Շուշի
քաղաքը, հասնելով Ղալա Ղալա դիւղը կէս օրին
իւր ծանօթ Գրիգորի տանը ճաշեց ու ճանապարհ-
ուեց հասնելով Սաղաաղան Թափս սարը, մի
ձին սկսեց գալ, մի բորան փչեց մի մառախուղ
պատեց գետինը, կասես թէ Սիմէօնի մահը
զլիին չոքեց: Թամին շպրտեց Սիմէօնին, Սիմէօնը
ընկաւ մի քարի տակ, որտեղ կարող էր ձիւնից
և բորանից քիչ պաշտպանւել:

Այդտեղ սազը առաւ ձեռքը և տեսնենք ինչ
է երգում:

Հօրից մօրից մի կերպ ջոկւեցի,
Թող քեզանով անցնեմ կաչաղակի սար,

Զոկւելու բաժակը ձեռքովս խմել եմ,
Թող քեզանով անցնեմ կաչաղակի Սար:

Վախենում եմ ես մեռնեմ տեսնող շինի,
Իմ կոտրւած սիրտս պատող չը լինի,
Իմ տեսած վարդիս քաշող չը լինի,
Թող քեզանով անցնեմ կաչաղակի սար:

Եթէ որ Սիմէօնին ցաւը իմանաս,
Ցուրտդ կը խանգարես արեդ բանաս.
Սուրբ Սարգսին կանչեմ իսկոյն չորանաս,
Թող քեզանով անցնեմ կաչաղակի Սար:

Երգը վերջացնելուց յետոյ Աստուծոյ ողոր-
մութիւնը հասաւ, մառախուղը քաշւեց, քամին
հանդարտւեց, ձիւնը դադարեց, և սկսեց արեը
դուրս գալ ամպի յետեցից: Սիմէօնը մահից ա-
զատւելով ճանապարհուեց, հասաւ թթու Զուր
անւանի խղճուղու ճանապարհի վերայի փոստը:
Այդ գիշեր փոստումը մնալով առաւօտեան ճա-
նապարհուեց, հասաւ կէսօրին Շուշի քաղաքը
եկաւ էլի Փաթի Աքօր տունը. Բարի յաջողում
Փաթի Աքեր: Փաթի Աքերը զարմացմամբ յետ
դարձաւ տեսաւ, որ իրանց թումանի որդի Սի-
մէօնն է, բարեեց հետը և շատ տեղեկութիւններ
իւր հայրենիքից կամ հօր տանից, բոլոր բարեկամ-
ներից, որը շատ ժամանակ էր, որ հօր տանից
դուրս էր եկել և շատ ժամանակ էլ էր, որ տե-

ղեկութիւն, չունէր հարց ու բարեկց յետոյ սկըսեցին լու հիւրասիրել Սիմէօնին: Սիմէօնը քանի օր մնաց այդ տեղ. մի օր Փաթի հաքուրը հարցը Եց Սիմէօնի Շուշի գալու նպատակը. Սիմէօնը ասաց, որ Բագու եմ զնալու. Փաթի հաքուրը շատ սախակեց և խնդրեց, որ չը գնայ Բագու որովհետեւ ասաց. Մի անգամ գնացել ես ինչ օգուտ ես տեսել և էս անգամ էլ, որ գնաս ինչ օգուտ ոլիտի տեսնես կամ թէ դուք կարող էք առանցի Բագուն էլ ապահով ապրել: Ինչքան խնդրեց, հնար չեղաւ, վերջումը ուզեցաւ Բագու զնալու բուն պատճառը իմանալ. Սիմէօնն ասաց երբոր ուզում ես իմ Բագու զնալու միտքս իմանաս կամ իմ սրտիս ցաւին տեղեկանաս, ես միմիայն կարող եմ քեզ իմ խոսքերս սազով հասկացնել: Սագն առաւ ձեռքը և տեսնենք Սիմէօնը ինչ է երգում, և Փաթի հաքուրն ինչ լսում:

Այերը.

Գլխովդ պտոյտ տամ իմ եղբօր որդի,
Ասա տեսնեմ հիմա որտեղ ես գնում,
Ես վիզս մեկնել եմ ուզում ես մորթի,
Ասա տեսնեմ հիմայ որտեղ ես գնում:

Սիմէօն.

Օրհնանքդ ինձ վերայ իմ Փաթի հաքու

Սատուած թէ յաջողայ օտար եմ գնում,
Յաւերս շատացած է կլինի բիւր,
Ես իմ ճարի համար օտար եմ գնում:

Հայուրն.

Ուզում եմ ցաւերդ բոլորն իմանամ,
Եթէ որ չիմանամ, ես ոնց գիմանամ
Աչքերովս քեզ համար կուրանամ,
Ասա տեսնեմ որդի ուր ես գնում:

Սիմէօնն.

Հաքուր դու կիմանաս իսկ իմ համբաւս,
Ես իստակ կասեմ քեզ իմ վատս լաւս.
Զեռնա թունաւ կենայ Նուպար կաքաւս,
Այս կաքաւի համար օտար եմ գնում:

Հայուրն.

Փաթին ասեց. Որդի օրերդ լոյս է,
Աստուած հասացնէ այդ մի ջոկ յոյս է,
Կարէլի է լաւ չէ աղջիկը, անտես է,
Արի այստեղ ուզում, որտեղ ես գնում:

Սիմէօնն.

Եթէ Սիմէօնը ես եմ չեմ կարող մնալ,
Իմ տեսած աղջկան աչքերն է չալ—չալ

Ճակատը սեղան աչքերը խալ խալ,
Այն խալի համար օտար եմ գնում:

Երգը վերջացնելուց յետոյ Սիմէօնն համբուրեց պառափի ձեռքը և խնդրեց, որ բարի ճանապարհ մաղթի: Պառաւն էլ համբուրեց Սիմէօնի ճակատը օրհնեց ու ճանապարհ դրաւ: Սիմէօնն ճանապարհւեց հասաւ Աղդամ անւանի թուրքաբնակ զիւղը, այնտեղ ճանգստանալուց յետոյ էլի ճանապարհւեց և քանի օրից յետոյ հասաւ կովկասի գետերի մայր Քուռ գետին, տեսաւ որ գետը ծովի է նման, անցնել անհնար էր, ոչ մի անցք կար, և ոչ էլ կամուրջ: Էլի սկսեց աղաչել աստուծուն—սազը հանեց և սկսեց երգել:

Դու Աստուծոյ մտիկ արա,
Ճանապարհ տուր անցնեմ Քուռ,
Ախ իմ մարմինս շատ տկար ա
Ճանապարհ տուր անցնեմ Քուռ:

Ֆիալայ չունեմ մէջըին հեծնեմ,
Դու տեսնում ես լած ու կոծեմ,
Աստուծով քեզ կանծեմ,
Ճանապարհ տուր անցնեմ Քուռ:

Քուռ դու Աստուծոյ ճանաչիր,
Քո չորս կողմդ ոչ կանաչի,
Սիմէօնիցը դու ամաչի,
Ճանապարհ տուր անցնեմ Քուռ:

Երգը վերջացնելուց յետոյ տեսաւ հեռւում մի մարդ է երեսում քիչ ուրախացաւ, մօտեցաւ այդ մարդուն. տեսաւ, որ այդ մարդը ձկնորսէ, խնդրեց, որ մի հնար անի գետն անցնելու: Ձկնորսը ունէր փելայ. նստացրեց վրան ու անփորձ ճանպաւ միւս կողմը: Քուռի անապատումը բաւական ճանապարհ գնալուց մի օր հացը վերջացաւ սովից մնաց կանգնած և յոյսը կտրած. ոչ մօտիկ բնակարան կար, ոչ մի ծանօթ տեղ ունէր, և ոչ էլ մի ընկեր, որ հաց ճարեր: Քիչ էլ գնաց, տեսաւ հեռւում մի եղեգնեայ խրճիթ է երեսում. մօտեցաւ խրճիթին և մտաւ տեսաւ ոչոք չկայ, տեսաւ բաղարձ հաց կար թիւած. բաւական սոված լինելուց սկսեց ագահութեամբ ուտել հացը. բաւականին կերաւ, կշտացաւ, քիչ էլ սպասեց, որ կարելի է խրճիթատէրը կը գայ, բայց չեկաւ, հացից էլ իրան համար ճանապարհի պաշար վերցըեց և սկսեց ճանապարհւել: Խրճիթից դուրս գալուց տեսաւ, որ մի ձայն է գալիս. ձայնը մօտեցաւ, տեսաւ որ մի քաջ երիտասարդ է: Երիտասարդը բարկացած հարցրուց Սիմէօնից:—Դու ով ես, քեզ ինչ կայ այս տեղ հիմա. այս ըոպէիս զլուխդ կտամ: Սիմէօնն ասաց ճանապարհի մարդ եմ քաղցած էի, մօտեցայ այս տնակին. բաւական սպասեցի մարդ չեկաւ վերջը քաղցածութիւնը ստիպեց հացից կերայ և հետո էլ քիչ վերցըել եմ. երիտասարդը հրացանը զգից հանեց, որ իսկոյն

գնդակահար անի Սիմէօնին. բայց Սիմէօնն էլ
իւր քաջութիւնը չկորցրեց. բռնեց հրացանի
ծայրիցը և երիտասարդին զլորեց գետին, որտին
չոքեց ու ասաց. Ամօթ քեզ համար ով երիտա-
սարդ, տեսնում ես, որ ես ոչ մի զէնք չունեմ,
ինչու ես նամարդութիւն անում զէնքդ ինձ վե-
փերայ բարձրացնում: Երիտասարդը ձեռքը մեկնեց
որ Սիմէօնին բռնի ու սպանի: Բայց Սիմէօնը
ինդրեց, որ ժամանակ տայ մի քանի խօսք սո-
զով ասիյ նրանից յետոյ ինչ ուզումէ անի.— Թու
մի ասիլ այդ եղեգնեա խրճիթը Խղրօղի Ալուն
աւազակային բնակարանն էր, որ ամբողջ Ղարա-
բաղը կամ Աղջաբաղու անապատը սարսափի մէջ
էր պահում: Կամ թէ ձիշան ասած Խնձորեսկեցի
Ղազաղ Լալան էր: Սիմէօնը սազն առաւ ձեռքը.
տեսնենք ինչ է երգում, լալան ինչ է լսում կամ
լալան ինչ է երգում, Սիմէօնը ինչ լսում:

Սիմէօն.

Եթէ որ աւազակ ես, մարդդ ճանաչիր,
Եթէ չէ, զլուխդ հիմա կը ջարդեմ,
Քանի ընկեր ունես բոլորին կանչիր,
Եթէ չէ զլուխդ հիմա կը ջարդեմ:

Լալան.

Աչքերդ բաց արա մի լաւ մտիլ տուր.

Իմացիր, որ ես ուժեղ մի քաջ մարդ եմ,
Դու գառն, ես գայլ, ինձ պատահեցիր,
Հիմայ քո միսդ ես կը մաքրազարդեմ:

Սիմէօնն.

Հասկանող մարդ պէտք է խօսքս իմանայ,
Խիլայ քաջ մարդ պէտքէ, որ ուժիս գիմանա.
Ես ձեռքս հուփ տամ, ով որ բանայ,
Եթէ որ չի բանաս ճանապարհորդ եմ:

Լալան.

Միթէ բանաստեղծ եմ, խօսքդ իմանամ,
Եթէ քո ուժիդ հինգ տակ զիմանամ,
Եթէ որ ձեռքդ ես իսկական բանամ,
Քո «Փառքիբարձունդ» այն վախտ կը կարդամ:

Սիմէօնն.

Սիմէօնը ցոյց կտայ իւր զօրութիւնը,
Մեռնելու ես քաշի քո պատրաստութիւնը.
Զեռքովդ քանդիլ տուր գերեզմանատունը
Գլուխդ սանդումը հիմա կջարդեմ:

Լալան.

Միթէ աւազակ Լալան զու չես տեսել,
Այս տեսակ նեղ տեղ ինքդ չես ընկել.

Այդ պէս որ դու ես ինձ հետ սկսել,
Հիմիկ մարմինդ ես ձեռքով կը բըթեմ:

Երգը վերջացնելուց յետոյ Լալան սկսեց
Էլի բռնել Սիմէօնին, որ սպանի, բայց Սիմէօնն
էլ Լալաց պակաս չէր ճի բռնեց զրաւ տակին:
Եւ սկսեցին կռւել, այդ միջոցին քանի ճիաւոր-
ներ հեռուից գալիս են դէպի զրանց. ճիաւորները
մօտեցան, տեսան, որ Խղօղի աւազակ էլեազն
է իւր խմբովը գալիս է: էլեազը տեսաւ, որ մի
անծանօթ մարդ ուզում է, որ իւր քաջ ընկեր
Լալուն սպանի, գարմացաւ և ուզեց անծանօթին
իսկոյ թողել տեղն ու տեղը: Անծանօթը իրնդր-
ւեց ասաց մի սպանիր, այլ ինդրեմ տեղեկանառ
պատճուռ և յետոյ ինչ ուզըւմ ես արտ և սկսեց
պատմել հանգամանքը. Խղօղի էլեազը զրա
համար շատ նեղացաւ Լալունանից և ասաց. Ինչու
ես մարդուն զուր տեղը նեղացնում կամ չար-
չարում և մինչե անգամ ուզում սպանել, միթէ
սովածին հաց չեն տալ, կամ թէ աւազակին միթէ
հիւր չի լինի և բացի զրանից, որ այդ մարդը
ճանապարհորդ է և քաղցած. այդպիսի մարդկանց
պէտքէ պատւել, իսկ դու անպատւում ես. դա
մարդ և աւագակ մարդու գործ չէ.

Էլեազը Սիմէօնին ուր գնալը խմացաւ, հետը
վերցրեց տարաւ Բագու գնացող խճուղու ճանա-
պարհի վերայ իջևանատուն հասցընց, 25 մանէթ

փող տւեց և պատիրեց, կառապաններին, որ
անփորձ հասցնեն Բագու և մի նամակ էլ բերեն
Սիմէօնից թէ չէ, հակառակ դէպքում արժանի
պատիժը կը հասցնէ կառապաններին: Կառապան-
ները Սիմէօնին անփորձ հասցըն Բագու և ի-
րանից էլ նամակ բերին յետ գառնալուց իրանց
հետ, հասցըն Խղօղի էլեազին, էլեազը միամտացաւ,
որ Սիմէօնը անփորձ հասաւ. Բագու: Բագու
համելով փողոցներով դէս դէս նայելով դէպի
գեղեցիկ և հարուստ խանութները որպէսզի մի
իջևանատուն ճարի, իջնի էնտեղ: Խանութպաննե-
րից մէկը տեսնեով՝ Սիմէօնին, որ ուրիշ երկրից
է և նորեկ է կանգնացընց նրան և սկսեց խօ-
սացնել. հարցըսուց անունը, ազգանունը, գիւղը
կամ գաւառը և Սիմէօնը բոլորը մանրամասն
պատասխանն տալիս էր, Խանութպանն ասաց
երբ որ իջևանատուն ես վինտրում տւելի լաւ է
համեցէք այս գիշեր մեր տանն մնայ: Սիմէօնն
շնորհակալ հղաւ և գնաց խանութպանի տունն:
Բաւականի ժամանակ ճանապարհորդութիւն ա-
նելուց Սիմէօնը թէ ինքը և թէ բոլոր հազնելիք
հագուստը կեղաստւել էր. երեկոյեան գնաց բաղնիս,
որպէս զի լուացւի—մաքրուի բաղնիսում. շորերը
հանելիս զլխարկը վերցըսուց զլխից տեսաւ որ
զլխարկումը մի ինչոր բան շրխկ շրխկում է.
ուշագրութեամբ զլխարկը վինտրեց, տեսաւ որ
Միջին Սոխայում պատերազմի ժամանակ խա-

նութումը գիխարկի մէջ դրած երկու հազար մա-
նէթ դրած թղթէ փողն է. մինչև այդ ժամանակ
բոլորովին մտքովն անդամ չէր անցել այդ երկու
հազար մանէթը:

Սիմէօնն լւացւեց, շուտ դուրս եկաւ բաղ-
նիսից, գնաց շուկայ առաւ մի ձեռք լւա հազուստ
հազար, էլի վերադարձաւ նոյն մարդու տունըւ
Երբ մարդը Սիմէօնին տեսաւ, զարմացաւ Սիմէ-
օնի այդպէս շուտ փոխւելուց: Այս անդամ անառ-
ակը ուրախացաւ իւր մէջ, որովհետեւ Սիմէօնի
առաջին տեսնելուց սիրելի էր նորան, որ այս
աղան շատ ազնիւ և խելօք երիտասարդ է երե-
ւում և ես էլ քանի որ աղայ ժառանգ չունեմ,
մի հատ աղջիկ է, ընդունեմ այս աղային ինձ
որդի, քանի որ այդքան լաւ է երեւում և ինքն
էլ գիւղացի է, վատ սովորութեան և կեանքի
ծանօթ չի լինիլ. ոս ճշմարիտ իմ սրախ ուղած
աղան է Աստուած ինձ է պարզել: Սիմէօնին
լւա պատւեց ու յետոյ սկսեց Սիմէօնին զանազան
հարցեր տալ և Սիմէօնն էլ ամեն մի հարցին
խելօք պատասխան էր տալիս: Տնատէրը ասաց,
Ինչու են ձեր երկրին Ղափան անւանում: Սիմէ-
օնը ասաց.—Ղափան անունը թուրքերէն է, քանի
որ մեր երկրի թուրքը շատ է դրա համար էլ
Ղափան են ասում: Այնտեղ կայ հին հայոց Բաղ-
դասար թագաւորից մնացած բերդ թուրքերը
բերդին Ղալա են ասում և այդ անունիցն է որ

կոչւում է Ղափան: Այդ երկրում կամ այդ
բերդումն են ապրել կամ քաջագործութիւն արել
յայանի զօրաւորներ կամ զօրապետներ. օրինակ՝
Դաւիթ բէկը, Թորոս Իշխանը կամ քաջ Աղասին
և միւսները:

Սիմէօնի այդպէս խելացի խօսելուց պարզն
աւելի ուրախացաւ: Եւ իւր մէջ վճռեց, որ սա
անպատճառ իմ որդիս է այսուհետեւ: Այժմ տես-
նենք աղջիկը ինչպէս է վերաբերւում դէպի այդ
անծանօթ երիտասարդին: Աղջիկը, որ մի 15
տարեկան մի չաեննուած գեղեցիկ աղջիկ էր, որ
նմանը չկար: Աղջիկն էլ աղէն տեսնելուց կամ
թէ երկար խոսուկցութիւնից յետոյ ախ էր անում
թէ ախ երանի կլինէր, որ այս երիտասարդին
իմ հայրս ընդունէր իւր փեսացու և ես էլ լինէի
նրա նշանած. աշխարհիս մէջ ամենաբախտաւորին
մէկն էլ ես կլինէի: Այդքան կարճ միջոցում
աղայի սէրը այնպէս էլ մտել աղջկայ սիրալ
կամ թէ աղջիկը այնպէս էր սիրում աղային, որ
կասես թէ երկուսը ծնւելուց մինչև այսօր իրար
հետ էին ապրել, իրար հետ մեծացել, ուղում էր
մինչև անդամ աղջիկը Սիմէօնին աշքով ունքով
քաշել դէպի իրան, գեռ մինչև անդամ իրար
հետ էլ ոչ մի անդամ չը խօսացած: Խօսացին
մինչև գիշերւայ ժամի 1-ը, պառկեցան քնելու.
բայց մինչև առաւօտը աղջկայ քունը բոլորովին
չը տարաւ, մնացել էր Սիմէօնի սիրով վառւած:

Առաւօտը պարոնը շուտ վերկացաւ, գնաց խանութիւն և աղջկանը պատւիրեց, և ասաց. Աղջիկս, Նաբաթ, Երբոր հիւրը վերկենայ լաւ կը պատուէք. Նաբաթի ուզեն էլ հենց դա էր. ասաց ու գնաց. Նաբաթը քանի անգամ միմեանց վերայ զգուշութեամբ գնաց մատաւ Սիմէօնի ննջարանը, տեսնի թէ զարթնել է թէ չէ. բայց Սիմէօնն ձանապարհորդութիւնից շատ նեղացած լինելով գեռ անուշ քնի մէջ էր, իսկ նաբաթն էլ շատ էր ցանկանում, որ շուտ վերկենայ խօսէ հետը, բայց չէր համարձակւում. Վերջապէս Սիմէօնը զարթնեց, և սկսեց զիր կարգալ. նա կարգում էր «Պըլպուղուն» գերքը, որ պահում. էր միշտ հետը և միշտ էլ կարգում էր. Նաբաթը ջուր տարաւ դրաւ մօտը երես սրփիչ դրաւ. ու ինքը դուրս եկաւ. Սիմէօնը վերկացաւ լուացւեց, հագնուեց, մազերը սանրեց. այդ ըսպէին Նաբաթը մտաւ սենեակը, բարի տւաւ Սիմէօնին. նա էլ բարեն առաւ, յետոյ սկսեց հետը խօսել, կամ թէ հարցնել օտարութիւն գալու նպատակը: Բաւականին երկար խօսացին աղջիկը շատ խնդրւեց շատ չարչարւեց որ համոզացնէ Սիմէօնին չը գնայ սիրեկանի յետեից, այլ մայ իրան առնէ կամ թէ իրան ծնողներն էլ շատ ուրախութեամբ ընդունում են և հօրը ունի շատ մեծ կարողութիւն, բոլոր այսուհեաւ իւր սեփականութիւնը կինի և ինքն էլ կինի ամենահարուստ ու բախտաւոր ու եր-

ջանիկ մարդը, ունենալով իւր նման կին և հօրը ահազին կարողութիւնը, բայց Սիմէօնը դարձեալ չը համոզւեց. Վերջումը Նաբաթը տեսաւ, որ Սիմէօնը չը համոզւեց, սկսեց ծամերից սազ շինհի և երգել ու երգով համոզացնել Սիմէօնին:

Այժմ տեսնենք, Նաբաթը ինչ է երգում կամ Սիմէօնն ինչ պատասխանում:

Նաբաթը.

Գոյնիդ մտիկ տալով ցաւդ իմացայ,
Արի ինձի ուզիր դու այս տեղ մնաւ,
Իմ սրտիս ցաւերը բոլորը բաց ա,
Արի ինձի ուզիր դու այս տեղ մնաւ:

Սիմէօնը.

Գոյնիս մտիկ տալով ցաւս իմացար,
Ինձ սիրեկան ունիմ չեմ կարող մնալ,
Թէպէտ քո ցաւերդ բոլորը բացար
Ինձ սիրեկան ունիմ չեմ կարող մնալ:

Նաբաթը.

Ոսկի թառի նման չալ — չալ աչքերո
Հինգ օրւայ լուսնեանման կեռ-կեռ ունքերու
Քիթս տկողնի նման, թշերս վարդի,
Արի ինձի ուզի այստեղ մնաւ:

Տղան.

Նրան աչքեր ինչպէս աչքեր՝ չը լինի,
Նրան ունքերին պէս ունքեր չի լինիլ,
Նրան թշերի պէս թշեր չի լինիւ
Ես պարզն եմ ասում, չեմ կարող մնալ:

Աղջիկը.

Անունս Նաբաթ է, հայրս է Նազար,
Բաժինքը է տալիս բառասուն հազար.
Իմ պատկերս է քաղցր, խօսելս ճարտար,
Արի ինձ ուզիր դու այստեղ մնա:

Տղան.

Թէ Սիմէօնը ես եմ չեմ կարող մնալ.
Իմ տեսած ակջկան աչքերն է չալ—չալ,
Ինչպէս յոյս եմ տւել, չեմ կարող մոռանալ,
Նուպարին չի տեսած չեմ կարող մնալ:

Երգը վերջացնելուց յետոյ Սիմէօնը նախա-
ճաշիկ արաւ ու շնորհակալութիւն արաւ ու ճա-
ճապարհւեց, գնաց քաղաքը, պարոն նազարին էլ
շնորհակալութիւն յայտնեց, յետոյ անցաւ գնաց
բաւականին ապրանք առաւ, հակեր կապեց. հաս-
ցըրուց նաւահանգիստ բագաժ տւեց, որ ապրանքը
հասնի կրամնաւողսկի, ինք էլ նաւ նստեց ճանա-
պարհւեց դէպի կրամնաւողսկի: Նաւը նաւահան-

գստից երբ արդէն բաւական հեռացել էր, յան-
կարծ նաւի մէջ հրդեհ գոյացաւ նաւի մէջ իրա-
բանցում ընկաւ չէին իմանում թէ ինչ անեն
ինչպէս ազատւեն իրանց փախչելու հնար չկար:
ուրիշ տեղից, ոչ մի փրկութեան ճար չկար:
Սիմէօնը մտածեց ասեց լաւ է միանգամից ջուրն
ընկնեմ խեղպւեմ քան թէ կրակի մէջ այրւեմ,
ուստի վճռեց իրան գցել ծովի մէջ, երբ որ կրակը
արդէն բռնել էր նաւի ամեն տեղը Սիմէօնն
մօտեցաւ նաւի ծայրին և իրան գցեց ծովը, բայց
իչքան մեծ եղաւ Սիմէօնի զարմանքը երբ իրան
տեսաւ ոչ թէ ծովումը, այլ մի փոքր նաւակի
մէջ, այդ նաւակը շոգենաւի նաւակն էր և մի
թոկով էլ կատած նաւից, Սիմէօնն իսկոյն կարեց
նաւակի թոկը և մի կերպ հեռացրեց նաւից:

Սիմէօնն տեսաւ որ թէկուզ նաւակի մէջն
է, բայց դարձեալ ազատութեան յոյս չուներ
մտածում է թէ շուտով փոթորիկ կը բարձրանայ
կամ թէ նաւակը կը շարժի և կը շրջի ինքը
էլլ կը մահանայ: Յոյսը չկորցնելով էլլ սագն
տուաւ ձեռքը և սկսեց սուրբ Սարգսից օգնու-
թիւն խնդրել:

Այժմ աեմնենք Սիմէօնն ինչ է երգում և
Սուրբ Սարգսիսը ինչ է լսում:

Այս ինչ պատահմունք է ինձ պատահեց,
իմ վերջին օրս է ծովումը մեռնել.

Այսուհետև ես կենդան չեմ մնալ,
Ճակատիս գրւած է ջրումը թաղւեմ:

Երեք հարիւր տասնեռութը հայրապետը,
Յովհաննէս Մկրտիչ Սուրբ Կարապետը.
Յիսուս Քրիստոսը նրանց Վարդապետը,
Օգնութիւն հասցնէ այստեղ չի կորչեմ:

Գրիգոր Լուսաւորիչը Վիրապու հորիցը,
Յովիսան Մարգարէն ձկան փորիցը.
Կը խնդրեմ նրանց թափող Տէրիցը,
Ինձ էլ թող ազատէ ես էլ պասկւեմ:

Սիմէօն կարօտ մնացիր դու նուպարի անունին,
Եռանդուն սրտով կանչի Սիմէօն ծերունուն.
Սուրբ Մարգիսի հետը ծովիցը հանեն,
Նուպարին պատկերը, մէկ էլ ես տեսնեմ:

Երգը վերջացնելուց յետոյ տեսաւ որ հեռւից
մի բարկաս է գալիս հրդեհւած նաւին օգնութեան:
Նաւին մօտենալիս բարկասի կարգադրիչը նըկա-
տեց, նաւակի մարդին բարկասը մօտեցրեց նա-
ւակին քաշեց բարձրացրեց նաւակից Սիմէօնին
ու դրաւ բարկասում: Այժմ Սիմէօնն Աստուծոյ
ողորմութիւնովը իրան ազատւած էր համարում:
Բարկասը ճանապարհւեց հասաւ Ուզուն Ազա-
նաւահանգիստը: Բարկասի կարգադրիչը տեսաւ,

որ Սիմէօնն շաա խելօք ու ազնիւ տղայ է երե-
ւում, մաքումը ասաց. ախ երանի կլինէր, որ
այս տղան իմ քոյրս ուզէր: Կարգադրիչը այս
մասին Սիմէօնին յայտնելու կամ առաջարկելու
համար չուզեց խօսքով ասի, այլ սազն առաւ
ձեռքը և սկսեց Սիմէօնին երգով հասկացնել իւր
քւորը Սիմէօնին տալու համար: Այժմ տեմնենք
քարկասի կարգադրիչը ինչ է երգում և Սիմէօնը
ինչ է պատասխանում:

Ես քեզ ծովիցը հանեցի,
Դու վերկաց գնանք մեր տուն.
Իսկոյն մահից ազատեցի,
Դու վեր կաց գնանք մեր տուն:

Սիմէօնը.

Ես խնդրում եմ եղբայր տղայ,
Ինչի համար գամ ձեր տուն.
Թէ ցաւ ունես ինձ պարզ ասա,
Ի՞նչ գործ ունեմ ձեր տանը:

Կարգադրիչը.

Շատ հիւրասէր է իմ հայր,
Նմանապէս ծնող մայրս.
Քեզ եմ տալու Աշխէն քոյրս,
Դու արի գնանք մեր տունը:

Սիմեօնը.

Ուզում ես քեզ պարզն ասեմ,
Ամաչում եմ քեզ հետ խօսեմ.
Տարիուկէս է նշանւած եմ,
Ես չեմ քանդիլ իմ պայմանը:

Կարգադրից.

Եթէ որ ճշմարիտ խօսես,
Դու քո փափագիդ կը համես.
Կարգադրիչ Արշակին լսես,
Դու վեր կաց գնանք մեր տունը:

Սիմեօնը.

Ուզում ես լաւ իմանաս,
Չեմ կարող այստեղ մնալ.
Աւելորդ է շատ խօսալ,
Չի կարող մնալ Սիմեօնը:

Կամանդիրը երբ տեսաւ, որ Սիմեօնը սիրել
կանի յետեից է գնում, իւր առաջարկութիւնը
աւելորդ է քւորը մասին, պատեց ու բարի
ճանապարհ մաղթեց, Սիմեօնն վերադառն եկաւ
նաւահանգստից ապրանքն ստացաւ. ուրիշ նաւով
էր ուզարկել ապրանքը, անվաս հասել էր.
ստացաւ ու յետը վերցրուց ու երկաթուղու-

կայտրաններում առետուր անելով հասաւ Զա-
քիլար: Սիմեօնը Զաքիլարին ասնելուց ման եկաւ
իջևանատուն ճարելու, բայց չգտաւ, որովհետեւ
թուրքեստան էր, բոլորն էլ թուրք ընակիչներ
էին, մի քանի հայ խանութատէրներ կային: Սի-
մեօնը գնաց կմի հայի խանութատէրի խնդրեց,
որ իրսն ընդունեն մօտներին մնալու այս գիշեր:
Այդ խանութատէրը շատ սիրով և ուրախութեամբ
ընդունեց և այդ երեկոյ շատ լաւ պատւեցին.
խսակցութեան ժամանակ Սիմեօնը յայտնեց իւր
ով և որտեղացի լինելը, իսկ տղեքն էլ յայտնե-
ցին, որ մենք Ղարաբաղի Կաղարծի գիւղացի են
երկու եղբար որդիք են, մէկին անունը Յովհանէս
է իսկ միւսինը Բաբայ: Երբ բաւական ուրախու-
թիւն արին, խօսացին մինչև գիշերւայ ժամի
տամներկուսը, յետոյ սկսեցին պառկել քնելու,
Սիմեօնին ցոյց տւին, մի լաւ պատրաստած
մահճակալ, որի վերևը կախւած էին շատ պատ-
կերներ տղամարդկանց, կանանց և աղջկերանց:
Տեսնելով այս պատկերները, Սիմեօնը էլի յիշեց
իւր Նուպարին և ուշի ուշով սկսեց յետաքրք-
րութեամբ նայել պատկերներին, յանկարծ ոչ-
քովն ընկաւ մի պատկեր, նմանացրուց Նուպարին
և ուշագրութեամբ մտիկ արաւ, տեսաւ, որ ճշ-
մարիտ Նուպարի պատկերն է: Այստեղ Սիմեօնը
էլ չի պառկեց, այլ ասաց Բաբայ, իւան, քիչ
սպասեցէք, մի քնէք, իմ գարդս ձեզ բացատրեմ

և սաղն առաւ ձեռքը սկսեց երգել:

Քեզ եմ ասում պարոն իւան,
Սյդ պատկերը ձեր ի՞նչն է.
Քեզ պահապան մեր Սուրբ նշան,
Սյդ պատկերը ձեր ի՞նչն է:

Իւանը.

Բարե եկար դու մեր հիւրը,
Սյդ պատկերդ է իմ քոյրը.
Քեզ պահապան մեր սուրբ տաճարը,
Իսկ եմ ասում իմ քոյրս է:

Սիմեոնը.

Զի կարծես թէ անհարմար եմ,
Ման եմ գալիս դրան ճարեմ.
Դրա համար խելագար եմ,
Սյդ պատկերը ձեր ի՞նչն է:

Իւանը.

Ի՞նչ ես խօսում դու ազատ,
Տէրտէրը քեզ չի տւել խրատ.
Հայրով մայրով ենք հարազատ,
Սյդ պատկերը իմ քոյրս է:

Սիմեոնը.

Գիւղս Զափնի հայրս Թուման,
Իմ մօրս անունն է Մարջան.
Սիմեոնին ճանաչիր իշխան,
Սյդ պատկերը ձեր ի՞նչն է:

Իւանը.

Գիւղս կաղարծ հայրս Ղազար,
Իմ հայրս խօսող է ճարտար.
Իմ քւորս անուն է Նուպար,
Սյդ Նուպարը իմ քոյրս է:

Երգը վերջացնելուց յետոյ, իւանը շատ նեղացաւ Սիմեոնից, թէ ինքն անտես անծանօթ մարդ, ինչու է այդպէս հարձակւում, թէ այդ պատկերիդ աղջիկը, ես ուզում եմ, որովհետե սիրոհարւած եմ, իհարկէ այդ խօսքերը իւանին գմւար թւած և դրա համար էլ շատ նեղացաւ։ Բարան տեսաւ, որ իւանը շատ է նեղացել, բռնորովին գունափոխւել է, մէջ մտաւ խօսք բացաւ սկսեց խօսալ ու իւանին հանդարտացնել և Սիմեոնին էլ միամտացնել ասաց։ Սիմեոն, չի վախենաս, կամ թէ չի վախենաս իւանը դեռ անփորձ երիտասարդ է, այդ խօսքերը իրան համար ստոր է թւում, բայց և ինքն ել շատ ուրախ կլինի, որ դու իրան քոյրը ուզես։ Համ էլ

սկսեց մի առակ ասելը, որ զրանց ուրախացնէ և մոռացութեան տայ իւանին չարութիւնը, առաց: «Մի վարդապետի ասացին, վարդապետ ու բախացիք քեզ համար մի լաւ աղջիկ են ուզեք քո հաւանած և քեզ շուտով պսակելու են: Վարդապետը սկսեց շատ սաստիկ լաց լինել, ասացին: Վարդապետ, ինչու ես լաց լինում, չէ որ քո միակ ցանկութիւնն է պսակելը և զա էլ շուտով կը կատարւի, իսկ դու ուրախանալու փոխարէն լաց ես լինում»: Վարդապետը պատասխանեց, վախենում եմ սուտ լինի: Սիմէօն մինեղանալ, հիմա իւանը նրա համար է չարացել, որ վախենում է, թէ քոյրը չի ուզես: Իւանը հանգարտեց վեր կացան քնելու, Առաւոտեան վեր կացան սկսեցին էլի իրանց առետուրն անել: Սիմէօնն, մի օր հինգ օր տասն օր մնաց այդ տեղ ոչ միտեղով չի գնաց, որովհետեւ այդ տեղ էր վերջապէս, իւր բուն նպատակը, որ և գտաւ: տեսան, որ Սիմէօնը իրանցից չի հեռանում: Սիմէօնն էլ իրան հետ բերած ապրանքը դրին իւսնութում և Սիմէօնին էլ ընկերացըին ու սկըցին տուետուրը: Վեց ամիս առետուր անելուց յետոյ, Սիմէօնը ասաց արդէն ժամանակս է, և ոլէտքէ գնամ: Բերին իրան համելիք բաժինը տւին իրան և բարի ճանապարհ մաղթելով ուղարկեցին: Սիմէօնը ճանապարհւեց, երկար ճանապարհորդութիւնից յետոյ, մի օր հասաւ Կա-

պարծի զիւղը: Դեռ Կաղարծի զիւղին չը հասած, կամ ճանապարհը չիմանալով համում է Ղարաբաղի Աղդամ անւանի թուրքաբնակ զիւղը, որ արդէն մօտ է Կաղարծին, պատահելով մի հայ ծերունի մարդի, որը և Կաղարծի զիւղին մօտիկ զիւղացի էր, հարցնում է Կաղարծի զիւղի ճանապարհը, բայց ծերունին հարցնում է Կաղարծի զիւղը գնալու պատճառը, Սիմէօնը խօսքով չի ասում, այլ սագն առնում է ձեռքը, սկսում երգելով պատմել սրաի ցաւը:

Հարցնում եմ քեզ ծերունի մարդ, Ռւզում եմ, ես Կաղարծի գնամ: Կաղարծ ունեմ հոտաւէտ վարդ, Համեմ Կաղարծ վարդս տեսնեմ:

Վարդս տեսնեմ ձեռքը բռնեմ, Սէրս իւր սէրին խառնեմ: Նուպարիցս վափագ առնեմ, Զեռքը բռնեմ պսակ գնամ:

Ապէր դու էլ Աստուած կանչի, Բալքեամ գործս կանաչի: Չի առես թէ սա բան չի, Աղօթք արա ես մօտենամ:

Սիմէօնն եմ ես շատ տկար եմ,

Յաւով դարդով անհամար եմ.
Ես իսկ իմ սիրածիս տէր եմ,
Ես բժշկւեմ մօտը մնամ:

Երգը վերջացնելուց յետոյ Սիմէօնը ծերունու հետ Աղքամից ճանապարհ ընկաւ, երբ բաւականին եկան և մօտեցան Կաղարծի գիւղին, ծերունին բաժանեց Սիմէօնից և Սիմէօնին էլ ցոյց տւաւ Կաղարծու ճանապարհը. Սիմէօնը հասաւ Կաղարծի գիւղին մօտիկ մի աղբիւր կար, աղբիւրի մօտ հանգստացաւ, քիչ յետոյ նունջը եկաւ գլուխը դրաւ մին քարի վրայ սկսեց, որ քիչ հանգստանայ, այդ տեղ քունը եկաւ քնեց: Երեկոյեան մօտ Նուպարը կուժը վերցրուց եկաւ աղբիւրից ջուր տանելու: Նուպարը տեսաւ, որ աղբիւրի մօտ մի ծառի տակ մի տղայ պառկածէ մօտեցաւ բաւականին մտիկ արաւ, տեսաւ որ ճշմարիտ իւր սիրելի Սիմէօնն է: Այդ տեղ Նուպարը փառք տւաւ Աստուծունի շատ ուրախացաւ, որ վերջապէս իւր սիրելու երեսը տեսաւ, որին տարիներ սպասում էր և գիշեր ցերեկ մի րոպէ մտքիցը չէր ընկնում, Նուպարը ուզեց, որ կանչի վերկացնի, բայց յանկարծ չուզեց զարթնացնել, այլ ծամերից սազ շինեց և սկսեց երգով զարթեցնել և այսպէս.

Աչքերդ բաց քնած տղայ,

Ակերկաց տեղէդ տեսնեմ ով ես:
Իմ մտքերս շատ—շատ վաղա,
Իմ տեսած տղի անով ես:

Աչքերդ բաց վեր կաց տեղէդ,
Համբոյը առնեմ ոսկի բեղէդ.
Ծաղիկ քաղեմ ես քո բաղէդ,
Տեսնեմ լոնչպիսի հոտով ես:

Ուզում եմ քեզ ես ճանաչեմ,
Ուրիշ լինես ես կամանչեմ.
Բարձր ձայնով քեզ կանչեմ,
Քնից կը զրկւես կը խոռվես:

Քնած տղա, տեղադ վեր կաց,
Իմ սրտիս ցաւերը իմաց.
Իմ սրտիս կոճակը դու բաց,
Նուպարին աչքին շատ լաւ ես:

Երգը վերջացնելուց յետոյ տեսաւ, որ Սիմէօնը դարձեալ չէ զարթնում, ծաղիկներից մի փունջ պատրաստեց, թրջեց ջրում ու բերաւ Սիմէօնի երեսին թափ տւեց: Զրի ցուրտ կաթեները իրար յետեից ընկնելով Սիմէօնի տաթեցները իրեսին, Սիմէօնը աչքերը բացաւ և քացած երեսին, Սիմէօնը աչքերը բացաւ և զարթնեց և կարծեց թէ անձրև է գալիս: Բայց զարթնեց և կարծեց թէ անձրև է գալիս: Բայց սրբան մեծ եղաւ զարմանքը, երբ աչքերը բացաւ

տեսաւ, որ անձրկ չկայ. մօտերքին մտիկ արաւը՝
տեսաւ որ էլ ասհաւողսկու երազում տեսած
աղջիկը: «Վահ. բարկ Նուպարս» ասեց ու բար-
ձրացաւ գրկեց ու համբուրեց իւր աննմանին:՝
Նուպարը ջուր բերաւ, Սիմէօնը երեսը լւաց,
Նուպարն էլ Սիմէօնին համեցէք արաւ իրանց
տուն, ու գնացին: Սիմէօնն ու Նուպարը գնացին
տուն, Նուպարը, որ տարիներ էր մի անգամ՝
ուրախութեան նշան չէին տեսել, երեսին այժմ՝
ով որ Նուպարին տեսնէր կասէր, որ աշխարհիւ
միակ ուրախութիւնը, կեանքը կամ վայելչութիւ-
նը սրանն է, ծնողները հարցրին Նուպարից ու-
րախանալու պատճառը և Նուպարն էլ ասաց, որ
ուրախութիւնս սա է, ցոյց տալով Սիմէօնին,
որ այդ մասին արդէն ծնողները գիտէին իրանց
աղջկայ սիրահարւելը և սպասում էին, մի օր,
ուրախ օր իրանց այն վեսային, որը Աստւած էր
իւր ձեռքովը այդ սէրութիւնը հաստատել
իւրանց մէջ և ահա այդ էլ այն օրը. ծնողները
տեսնելով Սիմէօնին, որ շատ մի բարի ազնիւ և
խելօք ու ազնիւ երիտասարդ է երեսում,
շատ ուրախացան, համբիւրեցին ինչպէս իրանց
երրորդ որդի համարելով, լաւ ուրախութիւններ-
արին: Սիմէօնը քանի օր մնաց այդ տեղ նշան
տւաւ և հարսանեաց պատրաստութիւն քաշել
տւաւ ու հարսանիքի ժամանակ դրաւ ու ինքը
ճանապարհ, ընկաւ եկաւ հասաւ իւր հայրննի

Զափնի գիւղը, շուտով այդ տեղ էլ հարսանեաց
պատրաստութիւնը տեսան և շատ ուրախացան,
որ Սիմէօնն արդէն փոխւած խելօք ու իշխան
տղայ է: Հարսանիքը սկսեցին, Սիմէօնն քսանինդ
մակառ և մեծ պատրաստութիւն վերցնելով, գնա-
ցին Նուպարին պատկեցին բերին:

Սիմէօնն հասաւ իրան փափազին, գուք էլ
հասնէք ձեր փափազին: Ամէն:

ՄԱՐԴ ՈՒ ԿԻՆ ԻԲԱԲԻՑ ՀԵՌԱՑԱԾ.


Յերեկս գիշեր է, գիշերս խաւար,
Զեմ իմանում ինչպէս անեմ սիրելի.
Հոգիս թառամւած է մարմինս տկար,
Զեմ իմանում ինչպէս անեմ սիրելի:

Կանչում եմ բլբուլս, ձայնդ չի գալիս,
Ծիծաղս մոռացած տխուր մնալիս.
Գիշեր ու ցերեկ լալիս—եմ լալիս,
Զեմ իմանում ինչպէս անեմ սիրելիս:

Մի որցակ, որ բաժանվի հաւիցը,
Արցակին քունը չի տանիլ ցաւիցը.
Ծերը չի կշամանալ պառաւ հաւիցը,
Զեմ վմանում ինչպէս անեմ ես:

Մի զիշեր երազում եկել էր ինձ մօտ,
Թհիցը քաշեցի, որ ես քաշեմ հօտ.
Ափսոս այն երազ, որ վերջը եղաւ սուտ,
Սուտ երազը ես ինչ անեմ սիրելի:

Աշուղ Առաքելն եմ մենակ մնացած,
Մէրութեան համիցը մին քիչ իմացած.
Պառաւ մարդ եմ հարս օտար գնացած,
Չեմ իմանում ինչպէս անեմ սիրելի:



ՄԻՒԹԱՐ ԽԱԹՈՒՆԵԱՆՑ ՄԱԿԻԶԻՆ ԿՆԳԱՆ
ՀԱՓՆԵՅԻ.


Էսօր ես եկել եմ տունդ,
Բարի օրս քեզ Ոսկի բաջի.
Փակւած լոած է բերանդ,
Որ չես խօսում Ոսկի բաջի:

Տեղդ պահում է տիկինդ,
Վերքին լինի ազօթ բանդ.
Նա է պահում աստիջանդ,
Երկմիտ չինես Ոսկի բաջի:

Մենակ ես թողել Միկիչը,
Պահապան Հազարափրկիչը.
Որդուդ գործը լինի աչը,
Ազօթքովդ Ոսկի բաջի:

Մալդաթ գնաց Լալազարը,
Լաւ կը պահի թագաւորը.
Մկրտչին դու համբերի,
Էլի կուգայ Ոսկի բաջի:

Մկրտիչը ինձ շատ սիրաւ,
Քուչիցը ինձ կանչեց բերաւ.
Աշուղ Առաքելը ասաւ,
Հորմի հոգուդ Ոսկի բաջի:



ԿԱԽԱՐՏ ԳԻՒՂԱՑԻ ՈՒՍՏԱՅ ՄԱՐԳԱՐԻ ԵՒ ԿՈԽԱՆ
ՈՍԿԱՆԵԱՆՑԻ ԱՌԹԻՒ.

Ասում է ուստա Մարգարան,
Փառք ունեմ քեզ տէր իմ Աստուած.
Իմ թագուհուս հետ միաբերան,
Գոճ եմ քեզնից Տէր իմ Աստուած:

Համ տւող ես, համ էլ առնող,
Շատերին աչքերը խառնող,
Շատերին ձեռքիցը բռնող,
Մեղ էլ հասիր Տէր իմ Աստուած:

Աստուած, ես քեզ ճանաչում եմ,
Օրով կեանքով կանաչում եմ.
Մի կողմով, ես ամաչում եմ,
Դու կիմանաս Տէր իմ Աստուած:

Դու կիմանաս մեր համբաւը,
Կամ վատը, կամ թէ լաւը.
Մեզ մի զցիլ մաքի ծովը,
Դու պահպանիր Տէր իմ Աստուած:

Աստուած, պէտք է ես համբերեմ,
Ամեն բանը մտարերեմ;
Իմ ապրելի էրմը ճարեմ,
Դու լսող ես Տէր Աստուած:

Որը կայ ջրով է գնում,
Որը կայ քարով է գնում.
Որը կայ կրակով է գնում,
Զիով էլ կան Տէր իմ Աստուած:

Մաղրում են ինձ յիմարները,
Չի եղար զաւակի տէրը,
Դու ես զաւակ տւող Տէրը,
Ինքդ դատես Տէր իմ Աստուած:

Խեղճ իմ եղբայր Գրիգորը,
Որդին, Հուռին ընկաւ հորը,
Հայրն ընկաւ սար ու ձորը,
Մասցածը պահիր Տէր իմ Աստուած:

Մէկ տարի նա մըմնջացաւ,
Առանց հաց, առանց ջուր մնացաւ.

Հայրը, մայրը տրտնջացաւ,
Տեղ չի հասաւ Տէր իմ Աստուած:

Ուխտ եմ արել սուրբ Գէորգին,
Ծառայ կենամ նրան զօրքին,
Մեր Մայրը Աթոռ սուրբ կարգին,
Քեզ եմ խնդրում Տէր իմ Աստուած:

Ուստայ Մարգարան խնդրւեց,
Աստուած, փակած գոներդ բացեց.
Այս խօսքս Երկէնանց զրւեց,
Յիշատակ է Տէր իմ Աստուած:

Ինձ համար դա մի մեծ բան ա,
Որդոց որդի դա կը մնա,
Մեզ համար դա մեծ նշան ա,
Էլի գոհ եմ Տէր իմ Աստուած:

Ես շինեցի Բեխու ժամը,
Առել եմ աղօթքի համը.
Կատարեցի Աստուածոյ կամը,
Քեզ յայտնի է Տէր իմ Աստուած:

Շատ մարդիքներ ունեն զաւակ,
Տեսնենք որն է առել փափագ.
Զաւակն էլ է դարդ ու կրակ,
Դէհ, ինչ ասեմ Տէր իմ Աստուած:

Իմ Թագուհիս Բեխեցի է,
Սարդիս Բէկին տունը լի է:
Խմեցէք խմենք զինի է,
Դու շեն կենաս Տէր իմ Աստուած:

Կաւարտեցիք ջորհակալ եմ,
Կարելի է ես սխալ եմ.
Ես մի օրհնանք ձեզ ասել եմ,
Թող շուտ լսի Տէր իմ Աստուած:

Կաւարտեցիք ձեզ չեմ ատում,
Անխրատին եմ խրատում.
Ես կոտրած սիրտն եմ պատում,
Խնդրեմ լսես Տէր իմ Աստուած:

Աստուած ձեր որդիքը պահի,
Մոլորներին սիրտը շահի.
Ում որ ունի Աստուած պահի,
Շատ ուրախ եմ Տէր իմ Աստուած:

Շատ մարդիք կան որդու տէր են,
Դէհ, ինչ անեմ, որ անսէր են.
Անհամ բնութեան տէր են,
Ես չեմ ուզում Տէր իմ Աստուած:

Ես գնացի Փիր դայու դանը,
Կարեցի մատադ բանը.

Արելի հայր Աբրհամը,
Զուրկ չի մնաց Տէր իմ Աստուած:

Գնացի Տաթևու վանքը,
Նա օրհնի մեր օրը կեանքը,
Աշխարհում չի տեսանք տանջանքը,
Յոյս եմ կապում Տէր իմ Աստուած:

Աստուած, իսկ իմ յոյսո Դու ես,
Թէ խաւար եմ լոյսո Դու ես.
Այն կեանքումը չի անես անտես,
Խնդրում եմ քեզ Տէր իմ Աստուած:

Ես եմ զըել տամ այս բանը,
Թող լաւ լսի մեր Ղափանը.
Թագուհին է Մարգարի կինը,
Մեզ ջուխտ պահիր Տէր իմ Աստուած:

Համ ողորմած, համ ողորմող,
Կամ առնող ես, կամ թէ տւող,
Կամ շինող ես կամ թէ քանդող,
Ես նայում եմ Տէր իմ Աստուած:

Մարգարան է մեծ վարպետը,
Պահապան սուրբ Նահապետը.
Նուրիջանանց կարապետը,
Զիով գնաց Տէր իմ Աստուած:

Սուրդ մնացին ծնողները,
Վիզը ծռած երեխաները,
Երիտասարդ Միիթարը,
Քարով գնաց Տէր իմ Աստուած։

Յակովը հայրը Ոսկանեանը,
Սառէին է նրան կինը.
Քաղցը լինի դադաստանը,
Արժան առնես Տէր իմ Աստուած։

Աստառածածին Մայրամ կոյսը,
Որ ծնել է Քրիստոսը,
Նա է մեր բոլորիս յոյսը,
Միշտ կանչում ենք Տէր իմ Աստուած։

Սեղրակ, Միսակ Աբեգնակովը,
Յունտարին է կատարւում տօնը.
Դանիէլին է իւր նշանը,
Միշտ կարդում ենք Տէր իմ Աստուած։

Լսել ես Մովսէս մարգարան,
Խօսում էր Մասիսա սարան,
Յովսանը ձկան փորան,
Կենդան պահեց Տէր իմ Աստուած։

Հայոց օջախ Երուսաղէմ,
Պարելի է նրան թողէմ։

Ինչպէս կարելի է զեղեմ,
Մեր յոյն է Տէր իմ Աստուած։

Աշուղ Առաքելն ասէ,
Պէտք է, որ լսողը լսէ.
Աստուածակոյս խօսքը խօսը,
Զեղ պահապան Տէր իմ Աստուած։

Չափնի զիւղացի Մելիք Դադանեերի Տէր Գրիգորի որդի
Խաչատուրը եկեղեցի է Ժինում նոյն զիւղում, ի՛ լիւսակ
իւր հանգուցեալ եղբայր Անտոնի Շմաւոնի.

Աստուածանից մի լոյս կաթեց,
Դադակին սիրտը ընկաւ,
Ինչպէս արեգակը ծագեց,
Չափնու համար լոյս լուսացաւ։

Բարի խորհուրդ ընկաւ միտքը,
Փափկացաւ դէմ ու դէմքը,
Ժամը շինեմ դա է պէտքը,
Հինգ հազար մանէթ վեր գրաւ։

Հինգ հազար արժան դնայ,
Որդոց որդի նա կմնայ,
Ղորմի կասէ ով որ տեսնայ
Օրքայութեան դուռը բացաւ։

Խաչատուր ապերը խօսեց յարմար,
Իսկոյն Զափնու գիւղին համար.
Ժամը շինեմ չի մնան խաւար,
Հիմիկ գործը փողրաթ տւաւ:

Վեր առաւ Ակունց Վարդանը,
Պատրաստեց մշակ բանը,
Աստուած աջողայ իւր բանը,
Ուստան Կարունց Դաւիթը բերաւ:

Ուստա Դաւիթը բանն անէ,
Ուստաները զանազան է.
Զի կարաց, որ գործը տանէ,
Աշակերտը գործը տարաւ:

Աշակերտը Առաքելն ա,
Նրա խելքը շատ աւել ա.
Ուստին գործը օրհնաք տալ ա,
Առաքելը օրհնանք առսու:

Աշակերտն է ուստին որդին,
Համնի ուստի սուտին, դորթին,
Սատանային գլուխը ջարթեն,
Իրան ուստին հաւին հասաւ:

Ժողովուրդը հաւաքւեցին,
Հիմնատեղը շուտ քանդեցին.

Ամմա Խաչուն չարչարեցին,
Եշեց ոչ նա հիմքը դրաւ:

Ես ասացի դոչաղ խաչի,
Կոխած տեղը կը կանաչի.
Տեսնող մարդը կեցցէ կանչի,
Նա Զափնեցուց լաւ դիմացաւ:

Երեցւանքուց բերաւ կիրը,
Ըրկենանցու դումը քարը.
Կամ քիւնջերը կամարները,
Դուն գլուխը Բագին տւաւ:

Խոջա Սարգիսը հղբայր Կափին,
Բերած քարը սաժին չափեն.
Փայ, փայ, դոչաղ. քար կը թափեն,
Շարի քարը Սարգիսը բերաւ:

Մելիք Դաղակ պարոն Անտոնը,
Եղբոր որդի Շմաւոնը.
Շինեցին Աստուծոյ տունը,
Ասում են օրհնանք Յակովը տարաւ:

Զի կարծես զաւակ չունես,
Մնաց, անմահ զաւակ ունես.
Դումարբաղ չէ, որ դարդ անես,
Հոգիդ միշտ կենդան մնաց:

Եկեղեցին մնացող է,
Թէ խէր, թէ շառ կատարող է,
Աղջիկ, տղայ պսակող է,
Այդ վարցկդ էլ քեզ մնացաւ:

Լոյս գառնաս հայր Տէր Գրիգոր,
Բարի մարդ էր դորմի հորը,
Օքնուի ձեզ ծնւող փորը,
Չեզ պէս բարի զաւոկ բերաւ:

Տէր Գրիգորից գուք էք մնացել,
Ես չեմ կարող խօսել աւել
Արդարադատ պէտք է խօսել,
Լսողը ձեզ դորմի ասաւ:

Խաչատուք ապեր նոր սկսեմ,
Արդարադատ խօսք խօսեմ
Դու լաւ լսիր ես քեզ ասեմ
Այս աշխարհս ում մնացաւ:

Գլուխ եկաւ յիշատակդ.
Ինչպէս ինչպէս արել ես կտակդ,
Այն կեանք կառնես քո փափագդ,
Թէպէտ այս կեանք զուրկ մնացաւ:

Յիշատակներ շինող մարդը,
Այս է իմ խօսքիս դորմը,

Ինչպէս կայ վարովի վարդը,
Եկող տեսնողը հոտ քաշաւ:

Յիշատակ շինող մարդը,
Այս է իմ խօսքիս դորմը.
Ինչպէս կա վարովի վարդը,
Եկող տեսնողը հոտ քաշաւ:

Յիշատակը շատ լաւ բան է,
Նա արեգակի նման է.
Մահ չունի միշտ կենդան է,
Աշխարհիս միշտ արև աւաւ:

Մնաց Զավինու գիւղի համար,
Արժում է հա, քանի գումար,
Այսուհետև չէք մնալ խաւար,
Աստուած Զավինու որդի ասաւ.

Դադաեւին միտքը շատ ա,
Մեզ յոյս ունենք, Աստուած կտայ,
Աստուածակոյս համեմատ ա.
Բարի խորհուրդ միտքը բերաւ:

Դուք կանչեցէք միտքերան,
Լսի մեր սուրբ աւետարան.
Շինել տա մի ուսումնարան,
Ինչպէս ինքը ուխտը արաւ:

Դադակին ազգանունը,
Թող օրհնի մեր սուրբ նշանը,
Պահապան մեր սուրբ կրօնը,
Նա Զափնեցոնց ուրախացրաւ:

Աշուղ Առաքելը ասէ,
Աստուած ինքը շուտով լսէ,
Տեսնող մարդը բարի խօսէ,
Յարութիւնեանցը այսպէս գրաւ:

Ն Ա Մ Ա Կ I.

Զախար Միրզայեանցին.

Գտնւումեմ Բագու Զախար, ես գրում եմ քեզ,
Առաջին բերանը բարեւում եմ քեզ:
Քանի ժամանակ է մոռացած ինձի,
Հիմի քեզ ինդրում եմ միտդ բերես մեզ:

Նիզեարան եմ, չեմ իմանում ինչպէս ես,
Նամակս գրում եմ հետը կը խօսես.
Ինչ որ խնդրում եմ նրան կլսես,
Նամակիս սխալին չի անես անազ:

Մանեայ դու կը կարգես իմ գրածներս,
Պատմիր ծնողներիդ քանի շարքերս.
Դուք կը ներէք բոլոր սխալ խօսքերս
Աստուածանից Մանիայ դու առնես մուրազ:

Լսելով Դաւիթը այդ տեղ է լինում,
Զեր գործի շահերը նա է պահում.
Եւ գործի շարերը ուղիղ է տանում,
Այնքան թող լաւ լինի չի լինի աւազ:

Մանեայ ինձ տեղ բարե կանես մայրիկիդ,
Բոլորի գլխաւոր Զախար հայրիկիդ,
Թող արժանի լինեն իսկ քո փափազիդ,
Հարսանիքովդ մորթեն Բագ ու Ղազ:

Լսելով Ներսէսը այդ տեղ է լինում,
Եկած է Գանձակը այդ տեղ է ապրում.
Իրան փեշակն է իսկ բանացնում,
Ածիլով կամ մաշնով նա կտրում է մազ:

Աշուղ առաքելն եմ նամակս գըել,
Իմանում ես հոգով սրտով է սիրել:
Կարելի է եղբայր սխալը ներել,
Մանեայ իմ նամակս կարգայ պրայ հազ:

Ն Ա Մ Ա Կ II.

Զախար Միրզայեանցին.

Դրած նամակտ ստացի
Միամիտ կաց պարոն Զախար,
Ես կարդալով ուրախացի
Ուրախ ապրիս պարոն Զախար:

Ես կարդացի գրածներդ,
Հասկացել եմ քո խօսքերդ
Առաջ գնա քո գրածներդ,
Ուրախ կլինեմ պարոն Զախար:

Հոգով սրտով քեզ սիրում եմ,
Ամեն օր միտս բերում եմ
Սիսալ գրածդ ներում եմ,
Ես ներող եմ պարոն Զախար:

Քո սուտ խօսքիդ կը հաւատամ,
Քո գլխովդ ես պտոյտ կտամ,
Ամեն օր ես օրհնանք կտամ,
Կանաչ կենաս պարոն Զախար:

Օրհնեմ քեզ փափաղիդ հասնես,
Հիւրանոցումդ ուրախ աղքես,
Աստուած տա, դու խերը տեսնես,
Շատ լիանաս դու պարոն Զախար.

Զեմներս առաջդ խաչեմ,
Հոգով մարմնով քեզ աղաչեմ
Ե՞րբ կլինի ճակատդ պաչեմ,
Տեմնես կլինի պարոն Զախար:

Մանեան կարդա, իմ նամակը,
Աստուած տա, իր փափալը,

Երբ կլինի նրա պատկը,
Ես էլ տեսնեմ պարոն Զախար:

Իմ նամակս լաւ կը կարդես,
Ինչպէս ինքդ տղամարդ ես,
Ինձ համար հոտաւէտ վարդ ես,
Հոտով լինես պարոն Զախար:

Բարե կանես թաղագիւղին,
Կամ թէ իրան Մանեայ բալին.
Գոհ եմ ձեր ուրախ մնալին,
Ես միշտ կուզեմ պարոն Զախար:

Հարցանում ես տղիս համար,
Պսակւելու չի լինում ճար,
Դրան մասին շատ եմ տկար,
Ես ինչ անեմ պարոն Զախար:

Երբ կլինի ձեռդ բռնեմ,
Բարես բարեիդ խառնեմ,
Քեզանից ես փափագ կառնեմ,
Կը հովանան պարոն Զախար:

Արի ես ու դու մի բան անենք,
Մեր օրերը ուրախ առնենք,
Բաժակ վերցնենք մէկ մէկ խմենք
Էկստրի պարոն Զախար:

Սիրտս քեզի կարօտում է,
Զի դադարում պրպառում է.
Ճանապարհդ սպասում է,
Քեզ համար է պարոն Զախար:

Աշուղ Առաքելին բանը,
Ազրէսն է Յարութիւնեանը.
Մին էլ կնստի ձեր տանը,
Արժան լինի պարոն Զախար:

Բ Ա Ր Ե Ւ Ա Թ Ո Ւ Ղ Թ.

Գանւում եմ Բագու, եղբայրակին,
Միամիտ կաց Սաւզիւլ բաջի,
Ես հասելեմ իմ փափազին
Դու էլ համես Սաւզիւլ բաջի:

Քեզ հետ աղու հաց կերել եմ,
Հոգով սրառով ես սիրել եմ,
Որդիքդ բոլորը ճարել եմ,
Միամիտ կաց Սաւզիւլ բաջի:

Իմ խօսքերս դու լաւ լսիր,
Իմ նամակիս հետը խօսիր,
Դու կարդիր փափազիդ հասիր,
Զի լաց լինես Սաւզիւլ բաջի:

Դաւիթին շատ բարև կանես,
Նուպարին էլ ձեռնը բռնես,
Գրիգորիցը համբոյը առնես,
Դու ինձ տեղակ Սաւզիւլ բաջի:

Միշտական Աստուած կը կանչեմ,
Զեզ մօտ ես չի ամանչեմ,
Մէկ էլ գամ նոր ճանաչեմ,
Ասա ամեն. Սաւզիւլ բաջի:

Քեզ համար ես հաց ու աղ եմ,
Թշնամուտ զլուխը թաղեմ,
Յայտնում եմ մեռած չեմ սաղեմ,
Երկմիտ չիլինես Սաւզիւլ բաջի:

Իմանում եմ պառաւել ես.
Իմ ծնողից առաւել ես,
Ինչու ինձնից խռովել ես.
Արի հաշտւենք Սաւզիւլ բաջի:

Քո պահած աշուղդ ես եմ,
Զեր տան սազ ածողը ես եմ,
Ասող ծիծաղողը ես եմ
Ելի կլինի Սաւզիւլ բաջի:

Բազրատին հարսանիք արանք,
Զառղալամը հարսը բերանք.

Դուք էլ լսեք ուրախանանք,
Աչքերդ լոյս Սաւզիւլ բաջի:

Լաւ պար եկաւ Նանազիւլը,
Կամ Վարդինկան կամ Շամամը,
Կամ Սարգիսը, Դանիէլը,
Դուք ծափ տւէք Սաւզիւլ Բաջի:

Նամակս կարգի Գրիգորը,
Դուք չի գցէք սար ու ձորը,
Ուրախ անցկենայ ձեր օրը.
Ես փառք կտամ Սաւզիւլ բաջի:

Խաչատուր ավերը մեռաւ,
Դա քեզ համար լաւ չի դառաւ,
Աստուած նա ինձանից առաւ,
Զի նեղանաս Սաւզիւլ բաջի:

Մէկ օր կը գնաս ժամը,
Կտոնես աղօթքի համը,
Կտարես Աստուծոյ կամը,
Կտաս փառք Սաւզիւլ բաջի:

Դուէն կանչի ժողովուրդին,
Կանանցը կամ թէ մարդին.
Թող կաց իմ նամակս կարդեն,
Զի ինայես Սաւզիւլ բաջի:

Օրհնես տէր կասես տէրտէրին,
Սարգաւագ կանզնած ընկերին,
Աստուածնուն սուրբ պատկերին,
Շամ կը վառես Սաւզիւլ բաջի:

Լաւ կը կարգայ Վարթանուշը,
Զգոյշ պահի իրան ուշը,
Դու եփես հարսանիքին ճաշը,
Փայս պահի Սաւզիւլ բաջի:

Աշուղ Առաքելին սիրես,
Հիմի դու քո միտդ բերես.
Սխալ զբածներս կը ներես,
Ներող լինես Սաւզիւլ բաջի:

ԿԱԽԱՐԴՈՒԹԻՒՆ ՏԵՐՏԵՐԻ:

Հազար ութ հարիւր իննասուն եօթին,
Աշուղ Առաքելն է զրոյզը Տէր Յակոբ.
Դեկտեմբերի ամսի քսան մէկին,
Այս խօսքերս դու ես լսող Տէր Յակոբ:

Դու ինքդ ես անում խոզ պատարագ,
Եթէ որ հասկանաս, կլինես սրտածագ,

Ասում ես աշխարհում ես եմ, դուք ոչ կար,
Քո խօսքերդ դու ես լսող Տէր Յակոբ:

Ասած պատարազը Թրիստոս արաւ
Յետոյ քահանայոց իրաւունք տւաւ,
Վերէն ասած խօսքը, որ տէրտէր լսաւ,
Դու ես պատասխանս տւող Տէր Յակոբ:

Աշուղ Առաքելն է այս խօսքս զրող,
Վիճակումս տեսամ այսպէս արատող.
Դու ես առանց որդին, իսկ հայրը թաղող,
Որդին հօրը կարօտ թողող Տէր Յակոբ:

Ուզում ես Տէր Սովորմանը ինքդ խրատես,
Աստուծոյ ատեանին կը մնաս անտես,
Թրիստոս տւել է արիւն ու միս,
Քո Տէրիդ քարոզը ձնշող Տէր Յակոբ:

Գնա փեսայ Փարամազիցը դառ առ,
Նորանից սովորիր ուսումնական բառ,
Ուսումդ նմանւեց ինչպէսի անտառ,
Ուրիշների անտառ ասող Տէր Յակոբ:

Աշուղ Առաքելն եմ ինչպէս զիմանամ,
Թէ զիտուն տէրտէր ես ինչով իմանամ,
Քո արած բաներդ ես որտեղ բանամ,
Շատ կինի խօսող Տէր Յակոբ:

ՍԵՒԱՐԲՈՐ ԳԻՒՂԱՅԻ ՍՈՒԼԹԱՆ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ
ՂԱԶԱՐԵԱՆՅԻՆ ՄԵԽԹԱՐԱՆՔ ՍԴԻ ՍՈՒԹԻՒ:

Հազար իննհարիւր տասնուերեք թւին,
Իսկ իմ անգիւթ մահս եկաւ,
Յունվար ամսի երեսունին,
Եկաւ ջիւան հոգիս տարաւ:

Սուլթանն եմ Ղազարեան,
Հայրս մայրս մնան շիւան,
Եղբայրներս ինձ չի տեսան,
Ափսոս անփափագ մնացաւ:

Ասած կտուէք Նիկալային,
Մատաղ գնացի ձեր բոյին.
Կը համնէք որբերիս հացին,
Երախնեքս որբ մնացաւ:

Աւանես, քեզ շատ ինդրեմ,
Պէտք է դարձս ես քեզ ասեմ,
Մօսս չէիր որ յետդ խօսեմ,
Իմ որտումս դադ մնացաւ:

Սուգ մնացին ծնողներս,
Վկղը ծուած իմ ընկերս.
Նմանապէս երեխաներս,
Զեղ համար մեծ ցաւ մնացաւ:

Մոխիրը թափւաւ իմ իւղս,
Քանդւեց կորաւ ջիւան բաղս,
Չի թողէք չորանայ թաղս,
Կարելի է Աստուած պահաւ:

Քեզ եմ ասում գարգս Վանէս,
Երեխեքս չանես անտես,
Քեզ խնդրում եմ լաւ պահպանես,
Սուլթանը քեզ յոյսը կապաւ:

Չէի ուզում, որ ես մեռնեմ,
Գնամ հողի տակին կոնեմ,
Չեսս մեկնեմ փեշկատ բանեմ
Սուլթանը կարօտ գնացաւ:

Աշուղ Առաքելը զրի
Սուլթանը գնացաւ թերի,
Անունս կարդի միտը բերի,
Իմ որդիքս ձեզ մնացաւ:

.....

ԷԼԻ ՍՈՒԳ
ՆՈՐԱՇԽՆ ԳԻՒՂԱՅԻ ՊԱՊԻ ՅԱԲՈՒԹԻՒՆԵԱՅԻ
ՑԻՇԱՏԱԿԻՒ:

Աստուած ինքը այսպէս գրան,
Դէհ ինչ ասեմ, որդի Դաւիթ,
Թուրքերը գողացան տարան,
Դրւածքս է որդի Դաւիթ:

Ճի զրւածքս պէտք է քաշեմ,
Աստուծոյ կանոնին իլեմ,
Քեզ չի տեսնեմ գարգս յիշեմ,
Շատ մեծ ցաւ է որդի Դաւիթ:

Քեզ չի տեսայ տսեմ ցաւս
Կամ վատս, կամ թէ լաւս,
Կորած մնաց իմ համբաւս
Միտդ պահես որդի Դաւիթ:

Յո հայրդ եմ անունս Պատիի,
Որդին հօրը կը տաղտապի,
Բա թուրքըն էլ հային կը խափի
Պէտք էր խոփւեր որդի Դաւիթ:

Աշուղ Առաքելին տէրը,
Ինձի գողացին թուրքերը,
Մայրիդ վերայ զցի քարը,
Անունս զրի, որդի Դաւիթ:

ԵՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԶԱՓՈՒ ԳԻՒՂԱՅԻ ԱՐՏԵՄ
ՇԱՀԿԱԹՈՒՆԵԱՅԻՆ ԵՒ ԻՐ ԿԻՆ ԱՆԱՀԻՏԻՆ.

Հոգասէր Աստուածապաշտ,
Ես նայում եմ դու ևս Արտեմ.
Չար գործի յետ չես լինիլ հաշտ,
Աստուածակոյս դու ես Արտեմ.

Թէ խօսքս ես զրում եմ մեծ,
Ես չեմ զրում լաց ու կոծ,
Մարտիրոսն է անդամնարյժ.
Պահպանողը դու ես Արտեմ:

Անահիտը լաւ տիկին է,
Ես նայում եմ նա անգին է,
Իւր տեքօրը պահապան է,
Իմ զրածս պատմես Արտեմ:

Մարտիրոսին օրը, կեանքը,
Դու ես զրկում զարդարանքը.
Չես թողում քաշի տանջանքը,
Նրա տէրը դու ես Արտեմ.

Մարտիրոսին շատ է հոգդ,
Պակաս չի լինի քո շոգդ,
Ոչ մէկիցը չունի օգուտ
Միշտ օգնողը դու ես Արտեմ.

Անահիտ դու բարի գաւակ,
Աստուածանից առնես փափազ,
Ինչպէս առաւ որդի Սահակ,
Նմանապէս առնես Արտեմ:

Քեզնով լինի Մարտուն մահը,
Դու ես նրան զլիսի շահը,

Մաղին է քո հոգապահը,
Դու չես թողում անտես, Արտեմ:

Անահիտը որ չը թողէ
Արտեմ չանը հնց կղրկէ,
Անահիտը ասում է զրկէ
Ես ասում եմ ծախես Արտեմ:

Ասանց քեզ Մաղին հնց անի,
Թող սել գո Մաղին տանի
Քո շոգումդ կեանքը անի
Մարտուն համար կեանք ես Արտեմ.

Այս բանս անողը դու ես,
Մարտուն պահպանողը դու ես,
Աստուած քեզ չանի անտես,
Դու էլ փափազ առնես, Արտեմ:

Էն Յովհաննէս Մկրտիչը,
Պահապան հազարափրկիչը,
Ես կանչեմ սուրբ կատարիչը,
Չի անի քեզ անտես Արտեմ:

Տեսնում եմ, ողորմած մարդ ես,
Վարովի հոտաւէտ վարդ ես
Պատի քնած քեզ զարդ ես
Գրածս կատարես, Արտեմ:

Հաւ կը կարդաս զրածներս,
Քեզ պահապան իմ սուրբերս,
Ես զրեցի այս խօսքերս
Աշուղ Առաքելին ներես, Արտեմ:



ԽՆԴԻՐԻՑ ԶԵԽԱՅԻ ԳԻՒՂԱՅԻ ՊԱՐՈՆ ԳԵՌՈՎ-
ԵԳԻՍՅԵՐՈՎԻՆ:

Իմ երգիս իշխանն ես,
Եղիազարով պարոն Գէորգ,
Աշխարհում չի մնաս անտես,
Եղիազարով պարոն Գէորգ:

Տպել եմ տամ զրածներս,
Ինչքան որ կան իմ խօսքերս,
Քեզ պահապան իմ սուրբերս,
Եղիազարով պարոն Գէորգ:

Աշխարհի մէջ չը համանչես.
Ես օրննեմ քեզ, դու կանանչես,
Դէպի ինձի դու էլ շնչես.
Եղիազարով պարոն Գէորգ:

Աշուղ Առաքել Յարութիւնեան,
Քեզ պահապան մեր սուրբ նշան-

Գլուխ ես բերել ուսումն արան
Եղիազարով պարոն Գէորգ.



ՅԱՆՅԱԿՈՐՈՒԹԵՒՅ.

Ուզում եմ տաք ջուրը գնամ,
Փող չունիմ իսկ իմ ջանան,
Գնամ ջուրը առողջանամ,
Փողս ստացի Մաղանան:

Սսուռած կեանք տայ Նարինեանցին,
Սմբաթ Բէզ Մելիք Ստեփանեանցին.
Պարոն Հմայեակ Վահանեանցին,
Պարոն Սմբաթ Խոջամիրեանցին,
Պարոն Արսէն Բաբաեանցին,
Գափրիէլ Բէզ Մելիք Փարսաղանեանցին,
Գերասիմ Աթաջանեանցին,
Նաւասարդ Պողոսեանցին
Շնորհակալ եմ Սարուխանեան:

Պաշարս տւել են ինձի,
Զեր տւածը սնցնի դանձի,
Զարախոս լեզուն թող պապանձւի,
Անառակ ցաւի տիրանան:

Զիս բոնել եմ Զափնու գեղան,
Դաւիթեանց Սիմէօնի տղան,
Իւր վարձը ստացաւ այն փողան,
Ճանապարհւեցի իսկ մեր տանան.

Գնացի հասայ քեռհնա Փորես,
Մահրատին ճարեցի անտես.
Լաւ մարդիցը լաւ կրաս,
Լուղնելը կը լիանան.

Հասել եմ Մինքանդու շէնը,
Գորիսից մին օր դէնը,
Պատրաստեցի վալադը բանը,
Դուրս եկամ Փորիսու հողան:

Հասել ենք Ալազովարը,
Գեղեցիկ է «Դալու սարը».
Հասանք «Թառթառու հարմարը»
Զուր խմեցի զուրս զալիս տեղան:

Հասանք տաք ջուր մէկ օր,
Ասացին կիւրակի է էս օր.
Զուրն եմ մտել ինքս տկլոր,
Բոնել է սրտիս ճապաղն:

Տեսայ, որ մին պառաւ եկաւ,
Պառաւն ինձ «բարի օր» առաւ,

«Որտեղացի ես», այս պէս հարցրաւ,
Էստեղ մի մարդ կայ ձեր տեղան:

Տեսայ որ էն մարդը եկաւ,
Պասիլկայ, չայ, շաքար բերաւ.
Սստուծոյ օրհնանքը առաւ,
Կաւարտեցի կուճուր Աղան:

Աւանէս Բէգին ճանաչացրեց.
Օրս, կեանքս կանաչացրեց,
Քեփս, հալս, նա հարցրեց,
Աղամ քեօխվի եղբոր տղան:

Մէլիք Քարամեան Աւանէս Բէգը,
Բերաւ Հասանջալալ-Բէգով բժիշկ Ներսէս
Բէգը.
Զաքուչով մաշինով արաւ մտիկը,
Բէզ կօգնէ ելեկտրական:

Խոջա Սարգիսը, Գալունց Թիւնին
Լաւ արադ ունէր Եփրեմին,
Եղն ու մեղրը իրանք կերին,
Հասրաթ թողին ինձ ամանին.

Հասած ծիրան, բաց բերան,
Ես պատէի իրանք կերան,
Ես չեմ ասում ինձ չի տւան,
Փայս պահեց, ծաղկի Սոնան:

Յամաք թողեց Աշուղ Առաքելին փորը,
Ժանզացրուց իւղն ու շորը.
Տար ածի տաք ջրին ձորը.
Մարիան Թութիւն կին Բանաւուշան:

Աշուղ Առաքել Յարութիւնեանը,
Կուչ եկած մնացած տանը,
Ճար չարաւ տաք ջուրը, բանը,
Երեխ իմ ցավին ճար չկան:



Ո Տ Ա Ն Ա Ի Ո Ր

Էս օր է բուն բարեկենդան,
Խիչ չես գնում տունդ Ծատուր,
Պէտք է բոլորը ուրախանան,
Խմանում ես բանդ Ծատուր:

Երեխեքդ ասում են արի
Սպասում են ճանապարհի,
☞ Կա աշխարհում չար ու բարի,
Սպասում է կինդ Ծատուր:

Մարդ իրան բարեկենդան օրը,
Ուրախ կը պահի իւր փորը,

Տան չի լինի տանը տէրը,
Զի զալ նրանց քունը Ծատուր:
Երեխեքդ սպասում են,
Յանկարծ ձայն է լինում դրաէն.
Ասում են հայրս եկաւ արդէն,
Մնացած դոնաբանդ Ծատուր:

Շատ էլ աշխատես դա ես,
Քիչ էլ աշխատես դա ես.
Երախոցդ մի մնալ անտես,
Գնա տեսութիւն Ծատուր:

Ուզում ես ինձ ասիր մեռնես,
Կը գնաս փափազդ կառնես,
Մէրդ սէրերին կը խառնես,
Խեղճ է ըո Մարեանդ Ծատուր:

Աշուղ Առաքելը ասէ.
Պէտք է որ լսողը լսէ,
Ես ինչ անեմ, որ չլսէ,
Կը մնա դադաստանդ Ծատուր:



† ԽԱՏԻՍԵԱՆԻ ՍՊԻԳԸ

Հոկտեմբերի 24-ին 1913 թ. Բազու բաղ.

Ով կը կարծէ թէ մեռած ես,
Յանդոցեալ Կոսի Խատիսեան,
Ես նայում եմ թեզ կենդան ես,
Յանդոցեալ Կոսի Խատիսեան:

Հայերք բորոք աշխ են խշում,
Մհծ կամ փոքր կեանի են մաշում,
Թողած զործերդ են յիշում,
Յանդոցեալ Կոսի Խատիսեան:

Քո ազգակոմնի Խատիսով է,
Քյսիդ խելքը անհակ ծով է,
Ամեն ազգ էլ թեզ կը զովի,
Յանդոցեալ Կոսի Խատիսեան:

Ափսոս թեզ պէս մարդ, որ մեռաւ,
Մեր հայերի սարքը ծրաւ,
Ասուած մեր հայերից առաւ.
Յանդոցեալ Կոսի Խատիսեան:

Դաս մարդկանց հետ կերել ես հաց,
Խատիսեանը մեռաւ զնաց,
Քո զործերդը թերի մնաց,
Յանդոցեալ Կոսի Խատիսեան:

Թերի մնաց կեանիդ օրդ,
Սուզ մնացին ընկերներդ,
Էլ չեն ժեսնի յն պատկերդ.
Յանդոցեալ Կոսի Խատիսեան:

Ինչպէս զեկու են մեռած,
Ճատ էլ պատկերդ է լոած,
Կենդանի կայ ինից մեռած.
Յանդոցեալ Կոսի Խատիսեան:

Բագրայ ժողովուրդը բորք,
Քեզ համար մնացին մորք,
Տիկինդ հազել է սեւ շոր.
Յանդոցեալ Կոսի Խատիսեան:

Քառասուն ինն էր հասակդ,
Նոր ես առել յն պասկդ.
Փոլ եկաւ յն դրօշակդ,
Յանդոցեալ Կոսի Խատիսեան:

Սուզ մնացին ընկերներդ,
Նիմանապէս եղբայրներդ,
Կամ կինդ, կամ յոյրերդ
Յանդոցեալ Կոսի Խատիսեան:

Հայերեն խօսողը դու ես,
Ըսողը ըսողը դու ես,
Ժողովի կանգնողը դու ես,
Յանդոցեալ Կոսի Խատիսեան:

Երբ որ յու մահը լսեցին,
Դործիմերդ սուզ մնացին,
Սիլիսուկով յաց քափեցին,
Յանգոցեալ Կոսի Խատիսեան:

Պահպանում էիր աղբասները,
Դու էիր աղբասների տերը.
Բորբ հայոց զիխառորը,
Յանգոցեալ Կոսի Խատիսեան:

Խոսակ զորնի իմժեներ էիր,
Ֆողովի մեջ զիխառոր էիր,
Քաղցր համես թմորեան տեր էիր.
Յանգոցեալ Կոսի Խատիսեան:

Դորուխանենը բերի զնաց,
Նեղորինեները մեզ մնաց.
Ո՞ւմ ես ասել իմ տեղ կաց,
Յանգոցեալ Կոսի Խատիսեան:

Քաղաքումը տղամարդ էիր,
Վարովի հոտանէս վարդ էիր.
Մարդկորեան մեջ առաջինն էիր,
Յանգոցեալ Կոսի Խատիսեան:

Խատիսեան անոնդ մնաց,
Ասում են ափառ, մեռաւ զնաց.
Քեզ պիս չի լինի, դու յաւ իմաց,
Յանգոցեալ Կոսի Խատիսեան:

Կոսի Խատիսեանը դու ես,
Հայերին բողեցիր անտես,
Քեզ պիս մեկը տեղդ դնես,
Յանգոցեալ Կոսի Խատիսեան:

Խատիսեանը որ մեռաւ,
Մեր հայերի սարբ ծոսաւ.
Մեզանից մեզ Աստոած առաւ,
Յանգոցեալ Կոսի Խատիսեան:

Հայերի վրայ յուր ես մարել,
Ես նայում եմ, յար ես մարել,
Հետեանին հոր ես մարել,
Յանգոցեալ Կոսի Խատիսեան:

Քիակդ սարսմ բնկերմերով,
Կանայ կարմիր ծաղիկներով.
Քահանարով, մողիկայով,
Յանգոցեալ Կոսի Խատիսեան:

Խատիսեանն էր մարդկանց յարը,
Բարի բողեց իր համբարը.
Հորսցաւ իր խելին ծովը.
Յանգոցեալ Կոսի Խատիսեան:

Զաւարեանցը, Քաղանքարը,
Նրանի էին հայերին ձարը.
Ասող յող խօսի տերը,
Յանգոցեալ Կոսի Խատիսեան:

Աշրդ Առամելի եկատ,
Խաչիսիսի մահի ժենատ,
Դէմի ինչ աներ, ողորմի աստ,
Յանկոցեալ Կոսի Խաչիսիսի:

Աջրդ Առամել Յարուբիսիսից
Գափանեցի.



1913 թվին, ԵՍ ԱՅՍՊՔԸ ԵՄ ԳՐՈՒՄ ՊՈ.ՐՈՆ ԱՆԴՐԵԱ.Ս.
ՆՈՅԵՄԲԵՐ Ա.Մ.ՍԻՆ Ա.ՍՈՒԻՄ ԵՄ, ԶՈՐԱՄ ԴՐԱԾՄ ՎԼՈՅԸ
ՊՈ.ՐՈՆ ԱՆԴՐԵԱ.Ս.

Անդրեաս, իեզ շատ պահի անմահ Աստմած,
Խղանաւը և եւ նայում եւ ողորմած.
Չարագրօթի հետ միշ վարում եւ դու նայիած,
Բարի գործեր ունես պարն Անդրեաս:

Ես եկատ կահուրը յն ժետրեսնի,
Աստմած յաջողայ յն զործ ու բանդ.
Չեսովի հանեցիր զու յն զրապան,
Խարեցրու սիել ես պարն Անդրեաս:

Մարգիսեանը Թուսասան զնացաւ,
Իմ այլերս ձանձապարհ մնացաւ.
Գոհանում եմ, Աստմած իեզ դայեալ կացաւ,
Լաւ է եղել զոհ եմ պարն Անդրեաս:

Աստմած վարժար պահի յն ծնած զիոդ,
Բազու ևս ապրում պազուեց ժեղ.
Ամեն մարդ ոտում է հացդ ու սպդ,
Յն տունդ շեն կենա պարն Անդրեաս:

Անոնդ գրեցի մարդի մարդանայ,
Քեփազ մարդը իեզ կը ժենայ որախանայ.
Ես գրեմ Ղափանումը միշ մնայ,
Դրածս կը մնա պարն Անդրեաս:

Զօրոքիւնդ նման է յաջ Վարդանը,
Առ գրած է ինչպէս Մամիկոննեանը.
Քո ծնած տեղդ է Քիլլո Ղափանը,
Ղափանի զաւակ եւ պարոն Անդրեաս:

Իմ մարդ յեզ խորմ է ասեղի վարշը,
Երան դու կը խրես մախարի վարշը.
Զի կարող դիմանալ կը գնա տշիլ,
Թշնամոն հաղորդ եւ պարոն Անդրեաս:

Քաջ սղամարդ ինչպէս Աշոս Երկարը,
Զարդեց վշրեց բշնամոնցը խռաիրը.
Նամարդին յես անիլ ինչդ մոննարը
Մարդի մարդանա եւ պարոն Անդրեաս:

Անկեղծ մարդ կը սիրես ոչ թէ կեղծաւոր,
Ես այսպէս գրում եմ դու միտդ բեր.
Նամարդ, նախանձ մարդկանց յես ընկնիլ բնիկեր,
Մարդի հետ կը նսես պարոն Անդրեաս:

Աշխարհումս շատ կան յար ու բարի,
Աշխարհս երազ է այնպէս համարի.
Մարդիի բող սպրեն, միևն հարիւր սարի,
Գիտեմ նաեած կը յինես պարոն Անդրեաս:

Ասուած ինչի ինձ շաստանց հետ բերաւ,
Եկաւ բազու արժանի է յեզ տեսաւ.

Կանոնումը ձեռիս ձեռիկ նի եկաւ,
Պաշարս տեղ ես պարոն Անդրեաս:

Ճնորհակալ եմ յես մոռանում աշրդդ,
Նայում եմ ես օրինած է ծնողը.
Էյի տեսար յեզ համար սազ ածողդ,
Յիմիկ ձեռիսա յնեկաւ պարոն Անդրեաս:

Այս նեկրս ես յեզ համար գրում եմ,
Օրդ կեանիդ հս միշ որախ բում եմ.
Ես իմ վարժս միշ բերանաս բերում եմ,
Դու ինչդ կիմանաս պարոն Անդրեաս:

Աշրդդ գրում է յեզ համար նաևակ,
Երկնային Տերիզը դու առնես վափագ.
Ինչպէս, որ առել է այս որդի Սահակ.
Դու ինչդ էլ առնես պարոն Անդրեաս:

Տեսնեմ զործերդ բոլորը սարֆին է,
Բոլորը տեղպատեղ իրան կարգին է.
Պրօմիսա կանօսոդ բոլոր վարֆին է,
Մարգովդ ապրես դու պարոն Անդրեաս:

Ափսոսում եմ, որ յեզ պատկ ը տնես,
Իմ տղաս էլ մնաց եղի յեզի պես.
Զի նեղանաս իմ այս խօսիս կը ներես,
Մեղս եերես խնդրում եմ պարոն Անդրեաս.

Քո հայրն է մեր Տեր Արիսկ տերտերը,
Մասծում են միջք, թեզ համար յոյրերդ.
Եր յունես յո սեփական բնիկերդ,
Դու կիմանս բանդ պարոն Անդրեաս:

Իմ խօսերս ես ոգում եմ սպել տամ,
Դորս համար ես Բագրումը շատ կիմամ.
Օսծուկ դարձ պետք ե թեզ մօս ես բանսու,
Իմ դարձիս ձար ամեն պարոն Անդրեաս:

Համ պացանեց համ հետ բերու իմ Տերս,
Սպել տամ յի կորչի ասած խօսերս,
Չորս սարի է օճը կոխած է սիմերս,
Պետք ե ես դիմանամ պարոն Անդրեաս:

Ասի տեսնեմ, վոնց կը յինի իմ ձարը,
Իմ զիսիս յոթել է այն սեր խառարը.
Մենար հետ եկաւ սխան Պազարը,
Օրինանիք թեզ վերսայ պարոն Անդրեաս:

Կարելի է իմ ձակասիս զիրն է,
Զի իմացի այս աղմանիս հիրն է.
Իմանմում եմ, վերցր ժամի մերն է,
Պետք է մենանեմ վարք է պարոն Անդրեաս:

Դրիգոր Լուսաւորչին Վիրապի հորումը,
Յոնան Մարգարեն ձկան փորումը.

Մովսէս Մարգարենի իրան սարումը,
Օրինանիք թեզ վերսայ պարոն Անդրեաս:

Աշող Առաքելին սազն է բած,
Տեսնում ես ձեռքերիս, մասները ծուած.
Յափը եկած յորս կողմովս փարարաւած,
Փառք եմ տախս էյի պարոն Անդրեաս:



Ա Ճ Խ Ա Բ Հ.

Հայ ազգը քեզ ինչ է արել սիրելի,
Որ չես թողնում աչքը բանայ ով աշխար.

Հայոց մօտը մէկ բան չունես ներելի,
Մինչև օրս դու խօսում ես հայոց չար:

Հայոց մօտը մնացել ես սև երես,
Երեսպաշտ ես այլոց ազգին բարի ես.
Աստուած գըթայ քեզի մեզի անգութ ես,
Հոգով կամ մարմնով թողել ես տկար:

Զարութիւնը քեզ յաղթել է ինչ անեմ,
Իմ մասս չի համնում ես աչքդ հանեմ.
Դու չես թողնում ես ինձ համար տուն շինեմ,
Ոչ ջուր ես տամ ոչ հող ես տամ ոչ էլ քար:

Աշխարհ որ դու ճանապարհդ ճանանչես,
Ես կորհնեմ քեզ դու աւելի կանանչես.
Քեզ ինդրում եմ արարմունքէդ ամանչես,
Յիմի կանես հայոց համար դու մէկ ճար:

Հայոց մօտը բաներ ունես անտառկ,
Ձեռքս ընկնես ես քեզ կանեմ խայտառակ.
Հայոց ազգը ցիրուցան են թափառակ,
Դու ես զցել հայոց ազգը վայ օտար:

Աշխարհ քեզ ինդրում եմ միտքդ ինձ ասես
Նեղութիւն մի տալ հային, սպասես,
Ասուածակոյս մարդկանց խօսքերը լսես,
Դու չի թողես հայոց ազգը միշտ խաւար:

Գիւղըդ Երկինացի աշըդ Ասաքել,
Ներեցեք իշխաններ խօսում եմ աւել.
Սուրբ կարապետ աղաս չնորհ է տուել,
Իմ կոպիտ լեզուս խօսում է ճարտար:

Զ Կ Ա Մ Մ Ա Բ Դ.

Բակ եմ քանդում որ տուն շինեմ,
Տունդ քանդի փիս հարեան,
Քարով կրով հիմքը դնեմ,
Դու չես բանում բարի բերան:

Պառակումը ոտնս դրամ,
Հարեանս եղաւ չըկամ.
Զուր տեղից գանգատ է տամ,
Ես ինչ անեմ ուսում չի կան:

Անուսում է ինքը յիմար,
Մնացել է խելքով տկար.
Չի հասկանում խօսում է չար,
Այսպէս թերի մարդիքներ կան:

Աշըլ Առաքելը ես եմ,
Հերկանում շատ անտես եմ.
Անուսումին ես ինչ ասեմ,
Անուսում տեղը սէր չկան:

ԲԱՐԻ ԶԱԿԱԿԻ ՃԱՏ ԱՊՐԻ.

Բարի զաւակը շատ ապրի,
Քարահունջի Մելիք Ծատուր.
Չար զաւակը թող շուտ մեռնի,
Քարահունջի Մելիք Ծատուր:

Եեր Առքել Ծատուրեանդ,
Բերաւ Հայրիկ Խրեմեանդ.
Եկաւ օրհնեց գերեզմանդ,
Քարահունջի Մելիք Ծատուր:

Եկաւ Հայրիկ Վեհափառը,
Զեռքը առաւ փուրլառը.
Օրհնեց գերեզմանիդ քարը,
Քարահունջի Մելիք Ծատուր:

Գերեզմանիդ արաւ թափոր,
Հեռագրով խըփեցին լուր.
Բագլից եկան աչա հանբուր,
Քարահունջի Մելիք Ծատուր:

Աշըլ Առաքելը լսեց,
Սազը շապեկից հանեց.
Հինգ տուն ոտանաւոր իռուց,
Քարահունջի Մելիք Ծատուր:

Ե Բ Գ.

Աստուած քեզի շատ պահպանի,
Աշխարհի մէջ մէր Ծատուրով.
Միաբան ես Հայաստանին,
Հայաստանի սէր Ծատուրով:

ԵԵԿ կենայ ստեղծող Տէրդ,
Լուսահոգի հէլոդ մէրդ.
Աստուածանից ելան սէրըդ,
Աղքատների սէր Ծատուրով:

Լաւ կիմանամ ես քու տեղդ,
Քարահունջ է խսկական գեղդ.
Աստուած տուաւ գանձդ ու փողդ,
Չունիս մէկ ընկեր Ծատուրով:

Ազգաւէրի հետ շատ սէր ես,
Անսէր մարդկանց հետ անսէր ես.
Թշնամոցդ համար հուը ես,
Հայաստանի սէր Ծատուրով:

Ազգի համար քուն չի ունես,
Անհասկ մարդկանց մօտ տուն չունես.
Իմանում են թէ բուն չունես,
Այս պէս կայ մէկ լուր Ծատուրօվ։

Փառք Աստուծոյ գործդ լու է,
Ամեն մարդկանց մօտ գովէ.
Քո մտքերդ անտակ ծով է,
Միտքդ անգին քար Ծատուրօվ։

Կեանք ես զոհել ազգի համար,
Բաց ես թողել անթիւ գումար.
Քոյ օրերդ լինի դալար,
Շողքդ ծանր սար Ծատուրօվ։

Արծրունին մեռաւ գնաց,
Նեղութիւնները քեզ մնաց.
Հայոց փակւած գոները բաց,
Գուշ անես մէկ ճար Ծատուրօվ։

Ամսոս որ մեռաւ Ռաֆֆին,
Նրան էլ չի ուներ մէկ զին.
Բարի սիրտեր այսպէս կասեն,
Նրան ցուրտ ցուրտ ջուր Ծատուրօվ։

Իզմիրլեանը ձեզ օգնական,
Աստուած լինի ձեզ պահապան։

Որ կարանք յաղթենք Տաճկաստան,
Չի անցկենալ զուր Ծատուրօվ։

Ձեզ օրհնի հայր Խրիմեանը,
Լուսեղին նորան բերանը.
Նստած է Աստուծոյ տանը,
Բոլոր Հայոց հայր Ծատուրօվ։

Դու գնում ես Հայաստանը,
Իմանում ես ամեն բանը.
Կտորեց Համիդ Սուլթանը,
Նա է հայոց չար Ծատուրօվ։

Ով կիմանայ քո միտքըդ,
Լուսափայլ է գեմըդ գեմքդ.
Ազգի համար կայըդ կայքդ,
Միտքդ խոր է սուր Ծատուրօվ։

Աշըդ Առաքելին երզը,
Դու ես մեր վիճակի փառքը.
Ուղղացրու հայոց աարքը,
Յաւը շատ, բիւր Ծատուրօվ։



ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ,

Աստուածանից միմիթարւեք,

Աւագ Սահմթուր Ասլին մեռաւ.

Աստուած տայ դուք էլ հանրերէք,

Աւագ Սահմթուր Ասլին մեռաւ:

Ինն օր տոաց հաց մնաց,

Աչքեր չունէր որ տաեմ բաց.

Նաշխուն Ասլիս ծաղկով գնաց,

Աւագ Սահմթուր Ասլին մեռաւ:

Աստծոյ դորձը պէտք է ներէք,

Էլի պէտք է մենք հանրերենք.

Այդ պատճառով շտա տկար ենք,

Աւագ Սահմթուր Ասլին մեռաւ:

Նախշուն աչքերով կուրացաւ,

Ինն օրումը չորացաւ.

Լոյս աշխարհից զուրկ մնացաւ,

Աւագ Սահմթուր Ասլին մեռաւ:

Եկաւ ձեզնից փափագ առաւ,

Եկաւ այստեղ սարքը ծըռաւ.

Անուշակերպ Ասլիս մեռաւ,

Աւագ Սահմթուր Ասլին մեռաւ:

Աշըր Առաքելն է հայրդ,

Մեռաւ գնաց Ասլի քոյրդ.

Շտա է լալում ծնող մայրդ,

Աւագ Սահմթուր Ասլին մեռաւ:

ԳՐԱՍԱՆՔ ՈՒՍՏԱ ԱՄՐՈՒՆ.

Հազար ութ հարիւր ինասուն վեցին,

Եյս խօսքերս աշըր Առաքելը կապաւ.

Իմ հայրս աղքատ էր կաւարտու միջին,

Երեխայ շատ ունէր, շատ դժբախտ ապրաւ:

Մայրս ճախարակով հայրս մատիապով,

Մայրս կերակրում էր մեզի հեսարով.

Մեկ օր ուրախ էինք մէկ օր էլ խըսով,

Մեր առաջւայ օրերը այսպէս եղաւ:

Հայրս Հանբարձումն էր մալրս Մարինուս,

Մէկի հետ խօսում էր մէկի հետ անխօս.

Երեխոցս հաց տուր սուրբ Պողոս Պետրոս,

Հնչպէս որ խնդրւեց այնպէս հասցրաւ:

Յեխ էի շինում այն ու հոգիցը

Տամ էի շեմքապետին առնում փողիցը.

Բերաններս կարոտ բրինձ եղեցը,

Մեր առաջւայ օրը այսպէս եղաւ:

Ասրին գնաց հանքը գրեկի մոտը,

Ասելով ապրում էր աղքատի սուտը.

Տէր Աստուած շուտ քանդեց աղքատաց պատը,

Ասրին այսպէս բարի մի խորհուրդ արաւ:

Մեր աղքատ լինելը մեր քեռին լսեց,
Եկաւ մեր տուն տեղը բոլորը հաւաքեց,
Տարաւ Գորիսումը իւր տանը դրեց,
Այն տեղ մեզի համար մին պլան քաշաւ:

Մեր զիւղի մարդիքը ծաղը էին անում,
Թող շատ ծաղը անեն ինչս ևն տանում.
Մեր առաջւայ օրերը այսպէս էր լինում,
Հայրս այնաեղ ինձի աշակերտ տւաւ:

Հայրս մեռաւ մայրս մնաց այրի,
Չի ապրեց մայրս յետ մի քանի տարի.
Իմ զինքս ընկաւ չար ու բարի,
Զահել ժամանակս իմ կեանքս խաշաւ:

Աշակերտ զնացի վարպետիս մօտը,
Վարպետից քաղեցի շնոհրքի հոտը.
Իմ Աստուածը տուաւ սրտիս կարօտը,
Գլուխս կամ սիրաս շնորհքով լցաւ:

Շնորըս տռել եմ ես իմ Տէրիցը,
Զաստոկ եմ վեր տռել թագաւորիցը.
Փող եմ պարտք տռել փողոտիրոջիցը,
Փողատէրը ինձնից բասպիսկայ տռաւ:

Պարտ տռած փողերը բոլորը մսխեցի,
Դիւղումը ինձ համար տուն տեղ շինեցի.

Աստուծոյ կամքովը միջին նստեցի,
Միջումը նստելուց մայրս ուրախացաւ:

Մի ժամանակ տեսայ իմ պարտքս շատացել է,
Շատ է ինչքան շատ է, շատից անհատ է.
Ով պարտքից չի վախէ այն մարդը սուտ է,
Այնքան պարտական էի իմ գոյնըս վախաւ:

Պարտքատէրս եկաւ, ես որտեղ գնամ,
Մեր տնիցը գնամ ուրիշ տան մնամ.
Չի իմացի ցաւըս ես որտեղ բանամ,
Կերած իմածս ինձ թոյն եկաւ:

Գիշերը քուն չունէի ցերեկը դադար,
Ասում էի Աստուած ինձի տար,
Եթէ որ չես տանում դու անես մէկ ճար,
Իմ Աստուածս ինձի համբերութիւն տուաւ:

Պարտքատիրոջ ձեռքին մնացի գերի,
Ում մօտ գնամ որ Աստուածը սիրի.
Զէյւու եկեղեցին շատ մնաց թերի,
Էլի իմ Աստուածս շուտ միտը բերաւ:

Ասրին գնաց Զէյւա խօսելու համար,
Զէյւու ժողովուրդը հաւաքեց զումար.
Տական զլխան խօսող մարդիքներ շատ կար,
Եղիազարով Գափին ճանապարհ բերաւ:

Խնձորեսկեցի ուստա Բագամը լսեց,
Եկաւ Զէյւու զիւղումը Ասրուն ասեց.
Ինձ տուած խալաթը Ասրի քեզ տան կեց,
Ուստան աշակերտին ծաղը արտւ։

Ասրին ասեց ուստա, դու օրհնի ինձի,
Ես թերատըդ շինեմ անց կենայ գանձին։
Ուստան ասեց, չարախօս լեզուն պապանձւի,
Կեցցէ ուստա Բագամ օրհնանքը տուաւ։

Ուստա Բագամն էլ լաւ օրհնեց գնաց,
Ուստա Ասրին Զէյւու զիւղումը մնաց.
Խելքը գլխումն էր աչքերը լաւ բաց,
Մատերիեալը բոլոր շուտով պատրաստաւ։

Կամարները քանդեց նորոգեց թաղը,
Եկեղեցին շինեց առաւ իւր փողը.
Արժանի արեցին հացը և աղը,
Զէյւու զիւղի միջին յիշատակ թողաւ։

Զէյւու անցաւ գնաց Սեաքար,
Եկեղեցին շինեմ չի մնան իւաւար.
Փողապաշտ մարդկանցը զլսին ընկաւ քար,
Հոգապաշտ մարդկանց շատ դուր իկաւ։

Ականջները քաշեց իւր տունը գնաց,
Գնաց իրան տանը կարճարոտ մնաց.

Աշունք ժամանակը էլի ետ գնաց,
Ասրին իւր սրտումը մէկ ուխտ արաւ։

Եկաւ դալլաք Գիւքոնց Մնացականին տունը,
Երեկոյեան ասեց իւր սրտի բանը.
Մնացականը ուրախացաւ չի եկաւ քունը,
Ասեց փառք քեզ Աստուած որտեղից եկաւ։

Լուսացաւ Մնացականը դուրս եկաւ շէնը,
Գրիգորին կահչեց Դաւիթի իշխանը.
Արի եղբայր կապենք մենք այս պայմանը,
Գրիգորը իսկոյն շուտ յոժար կացաւ։

Թէ աղքատ թէ հարուստ ժողովեց բոլոր,
Փողապաշտ մարդկքը մնացին մոլոր.
Կարելի է ասել կեցցէ Գրիգոր,
Ժողովուրդը բոլոր մի ձայնի բերաւ։

Ժողովուրդը բոլոր բարի խօսեցին,
Ուստա Ասրու հետ պայման կապեցին.
Զորս հագար մանէթը միջին գրեցին,
Ուստա Ասրին հիմա միամիտացաւ։

Հիմատեղը քանդեց իւր ձեռքովը,
Տէր Մեսրոպը օրհնեց իւր բերանովը.
Տամնուվեց քար մկրտեց սուրբ մեռնովը,
Մկրտած քարերը հիմատակ դրաւ։

Էրկենանց գիւղացի ուստա Ղազարը,
Քաջութեամբ քանդում էր ուռնոքի քարը,
Մղակը, ակոշկան, քունջը կամարը,
Կեցէ ուստա Ղազար շուտով հասցրաւ:

Ուստա Ասրին Ագոնց Խաչուն հետ խօսեց,
Չորս հարիւր մանէթով քրեհ կարեց.
Խօսեց վերջացրուց ասածը լսեց,
Ումնոքի քարերը Խաչին վեր առաւ:

Գևունց Փարեմուզը մէկ էլ ճաղարը,
Նրանք էլ վեր առան խամշարի քարը,
Իրան հաշիւն մնաց զումը կամ կիրը,
Քարին զումին կրին ցաւից պրծաւ:

Ուստա Ասրին կանչեց այն ուստա Աթին,
Ուստա Մնացականին կամ Լալազարին.
Ուհանջանանց Անդրուն Փիրունց Վարդանին,
Իւր եղբայր Յակովին, Մնացականանց Անտոնին,
Ղզարանց Գրիգորին, Առաքելեանց Վանին,
Միրջանանց Մկրտիչին, Մէլքոնմանց Փիրին,
Ով էր որ դարբինը չաքուներ սրաւ:

Այն ուստենուն ասեց քար տաշեցէք,
Եկեղեցու համար ոսկոր մաշեցէք.
Դուք անդութ միք կենալ բանի եկեցէք,
Հոգապաշտ մարդիքը այդ բանին եշաւ:

Թարունքը լուսացաւ սկսեց բանը,
Ամեն մէկ մարդ ճանանչի իւր աստիճանը.
Մշակ Հարին, Բաղին, Սօփոնց Յարութիւնը,
Զարչունց Բալան յետոյ վերից եկաւ:

Մի ամսումը բարձրացաւ պատերը,
Ուրախացաւ Տէր-Գրիգոր աղէրը.
Պատրաստեցէք դուք այսքանին փայտերը,
Հոգապաշտ մարդիքը այս խօսքս լսաւ:

Թաղին տակը հասաւ նորան պատերը,
Ետ դարձաւ սկսեց նորան ոտները.
Իստակ տաշած քարից ոտնապատկերը,
Ոտները կապելի երկաթներ բերաւ:

Քսան գաղ երկանքը, տասը գաղ լենքը,
Թշնամին տեսնելուս քաշի տանջանքը.
Մկաքարու մարդը դա Աստուծոյ փառքը,
Մկաքարը հիմիկ հայի շէն դառաւ:

Գովելի, փորմալի շինեց սեղանը,
Աչ թեկին ձախ թեկին շինեց խորանը,
Արգարադատ պէտք է խօսող բերանը,
Որովհեակ ուստան նեղութիւն քաշաւ:

Առաջ գլուխ բերաւ կայդա թաղերը,
Ոսկեղէն է ուստա Ասրուն մատները.

Թաղի զլխին կանգնեց եղեց բեղերը,
Փառք տւաւ Աստուծոյ, սիրալ ուրախացաւ:

Շահ թաղին ազգանուն վայելուչ կապեց,
Նրան ուժը շատ էր, համեմատ ցեխից.
Շահ թաղին տակից նորից սկսեց,
Կեցցէ, դուք ժողովուրդ, դա էլ վերջացաւ:

Եկեղեցին շինեց, առաւ իւր փողը,
Ազգանունն էլ քանդեց, բաց արաւ թաղը-
Արժանի արեցին հայն ու աղը,
Կեցցէ ուստայ Ասրի, թաղը լաւ պրծաւ:

Վերջի բանն այս է, սալկախ քարերը,
Ուստա Ասրուն օրնեցին Սեաքարայ գէրէրը
Ամենազլխաւոր, ծերունի տէրտէրը,
Կերածն ու խմածը արժանի արաւ:

Աշրդ Առաքելն եմ ես էրկանացին,
Հազար ութ հարիւր իննսուն եօթին օծեցին,
Ահազին մեծափառք ծախսը միսեցին,
Տաթեայ վանքից հայր սուրբեր եկաւ:

Աշրդ Առաքել, դու խօսում ես ճարտար,
Կեցցէ, ասեմ կեցցէ, կեցցէ Սեաքար,
Օծումի մատաղը տասը հատ տաւար,
Օղին կամ զինին հաշւի չեկաւ.

ԲնԴՀԱՆՈՒՐ ՂԱՓԱՆ.

Խուստոփ առաջիդ կանգնած է,
Մեր Ղափանին տէրը ասեմ,
Աստուծանից ստեղծուած է,
Գեղեցիկ պատկերն ասեմ:

Ղափանը այսպէս Ղափան է,
Մհալը գեղեցիկ բան է.
Ծաղիկները զանազան է,
Վայրենի վարդերն ասեմ:

Գոյնզգոյն վարդեր ունի,
Տեսնողի խելքը կը տանի,
Բերան պէտք է, որ գովարանի,
Քաղցը պտուղներն ասեմ:

Երեսը արծաթ, տակը ոսկի,
Աշրդ պէտք է բերի խօսքի,
Չի կարելի խազնան ծածկի,
Կանչեց մշակներն ասեմ:

Մշակներով տափը քանդեց,
Տափի տակից գոհար հանեց,
Բաշքանդ փըլքիկաներ շինեց,
Մարդ փչեց, փուքսերն ասեմ:

Փուքսերը թող այստեղ մնան,
Հիմի բարաւաթումբը գնանք,
Չասես արան պամբասանք,
Նրանց եղածներն ասեմ:

Ես եղել եմ Բարաւաթումբը,
Միաբան չեն իրանց խումբը,
Չկանանշել դրած տունկը,
Աստուած վերջը բարին ասեմ:

Գտւարդը բարի գաւարդ է,
Միջի մարդը շատ աւարտ է,
Սուրբ Գէորգը ծաղկաղարդ է,
Վառվուած ջաներն ասեմ:

Լսիր Գտւարդը լաւ գեղ ա,
Տակ ու գլուխ փող ա,
Որովհետև նա մեծ տեղ ա,
Բեխնէ ընկերն ասեմ:

Բեխու գիւղը թագաւոր ա,
Անկանոն չէ կարգաւոր ա,
Անապատը զօրաւոր ա,
Եկող ուխտաւորն ասեմ:

Ուխտաւոր կան Բեխու գեղան,
Չեմ կշտանալ հաց ու աղան,

Բեխնէ ընդհանուր Ղափանին աղան,
Նրա հին բերդերն ասեմ,

Բերդիցը գնանք վնըքանը,
Լաւ են պահում սուրբ կրօնը,
Հին մարդկանց գերեզմանը,
Բարի գաղաստանն ասեմ:

Բարի գնաք Բաղաւորջը,
Ես չեմ կարող խօսել կարձը,
Այնական է մարդկանց զւարձը,
Պարոն Սարգսեանցը ասեմ:

Սարգսեանցը Անդրէաս ա,
Զեսքին բռնած սոկէ թաս ա,
Նա ինձ համար պատրաստ զառ ա,
Գեղեցիկ սարերն ասեմ:

Գլուխը սար, տակը արան,
Բըղաւորջու նման չկան,
Գիւղիւմ է հազար ու զնման,
Ես ուսումնարանը ասեմ:

Ուսումնարանը շինեց Աւագեան Մանոչար
տղամարդը,
Գիւղումը գրել է ուսումի վարդը,
Ուսում առէք, ձերն է հերթը,
Ես Գիւղիւմա գեղն ասեմ:

— 106 —

Գիւղ մի ասիլ, կէս քաղաք ա,
Չկարծես թէ հասարակ ա,
Սարու արան կամ սրհակ ա,
Նրա ջաղացներն ասեմ:

Ջաղացը կամ ճըկբտէնը,
Ճըկբտէն կայ միաբանը,
Խօջա Աւուն տեղն է Արզումանը,
Լաւ կպահի, շէնն ասեմ:

Շէնան գնանք Ղրղուն Շէկահողը՝
Ոյն տեղ է մարդկանց դռչաղը,
Թշնամու աչքերի եղը,
Ես առնող քաջերն ասեմ:

Քաջեր շատ կայ Արբաշէնը,
Շէկահողից մի քիչ դէնը,
Որսութիւն է նորանց բանը,
Փարկեարէ զէնքերն ասեմ:

Փարկեարէ հասնեմ հանդը,
Յաւըն է կիմանցու փանդը,
Բշկէտ չի լինիլ ջերմ ու տանդը՝
Հիմի Մազըու գեղն ասեմ:

Մազըու գեղն մի ջոկ գեղ է,
Փող լինի պարաստ, ուտելու տեղ է:

Ուտելու և խմելու տեղեր է,
Անց կաց, Քաջարանն ասեմ:

Քաջարանն էլ նմանապէս,
Երեք ամիս այնտեղ նստես,
Ցուրտ—ցուրտ ջրիցը լաւ խմես,
Հիմի Ուղջու հանդն ասեմ:

Ուղջու հանդը ջոկ տեսակ ա,
Մարդը չարի հակառակ ա,
Զը կարծես թէ խայտառակ ա,
Քերտիկեանցա գեղն ասեմ:

Քերտիկեանցը դժուար գեղ ա,
Մարեր ունի, կարագ եղ ա,
Լաւ ալրանք պահելու տեղ ա,
Մազըոյի Փոխրուտն ասեմ:

Ապրես, Փոխրուտ Մազը, ապրես,
Մեռնես, Փոխրուտ Մազը, մեռնես,
Ուտես, խմես այնտեղ նստես,
Կանաչագոյն սարերն ասեմ:

Մարիցը իջնենք արանը,
Առաջաձորը նստարանը,
Կայ Մելիք-Մանիսանեանը,
Սմբաթ-Բեկի գեղն ասեմ:

Սմբաթ-Բեկը լուսաւոր ա,
 Որովհետեւ ուսումնաւոր ա,
 Մաքուր, գորնի ինժեներ ա,
 Խլաթաղա գեղն ասեմ:

 Խլաթաղա սար ու ձորը,
 Գեղում շատ կայ կեղծաւորը,
 Իրանք կիմանան որն է որը,
 Հիմի Տորթնու գեղն ասեմ:

 Տորթնու գեղը ժամ չունի,
 Ժամ շինելու կամ չունի,
 Տէրտէր չկայ, համ չունի,
 Ես ներքի Խօտանան ասեմ:

 Ներքի Խօտանան տխուր է,
 Մենակ ապրելը դժւար է,
 Գեղից ջոկւած անպայման է,
 Ես վերի Խօտանան ասեմ:

 Վերի Խօտանան շատ լաւ ա,
 Այնտեղ ապրելը իրաւ ա,
 Գեղում մարդ չկայ եաւա.
 Էրեցաթումբին գեղն ասեմ:

 Նոր շէն ա հա էրեցաթումբը,
 Միաբան են նրանց խումբը,

Կը կանաչի դրած տունկը,
 Շրւէնանց գեղն ասեմ:

 Շրւէնանցը էլ մի լաւ շէն ա,
 Սուրբ Սարգիսը պահապան ա,
 Ուսումնարանը շատ լաւ բան ա,
 Շինովի տղամարդն ասեմ:

 Շինեց Գասպար իւանիչը,
 Պահապան հազարափրկիչը,
 Պետիգորսկի է նրա դաչը,
 Նորաշէնի գեղն ասեմ:

 Նորաշէնցիք քէֆ անող են,
 Օրը ուրախ անցկացնող են,
 Ափոսս որ երեսին խօսք ասող են,
 Նրանց նոր հանքերն ասեմ:

 Սմբաթ Բէկը քանդեց հանքը,
 Աստուած օրնի նրա կեանքը,
 Թշնամին քաշէ տանջանքը,
 Սևաքարու գեղն ասեմ:

 Սևաքարը սևաքար ա,
 Ինձ համար շատ զօրաւոր ա,
 Որովհետեւ իմ հաներ ա,
 Էլի Սևաքարն ասեմ:

Սկաքարու բակը շատ է,
Չորս կողմը չըջապատ է,
Նբանց օրը կեանքը սուտ է,
Հիմի Զափնու գեղն ասեմ:

Զափնի ափսոս չար խօսողին,
Իզուր տեղից կախ զցողին,
Հարեանի գիւլ տուողին,
Էլի Զափնու գեղն ասեմ:

Զափնու գեղը մի ջոկ գեղ ա,
Ապլանք պահես, ոսկի տեղ ա,
Կըրմբաքարը հալած եղ ա,
Էրեցվանքու գեղն ասեմ:

Էրեցվանքու ժողովուրդը,
Օրհնուած է մեջի մարդը,
Այս է իմ խօսքիս դորդը,
Ակոփ ճգնաւորն ասեմ:

Ճգնաւորի զլիսի վանքը,
Ծաղիկներով զարդարանքը,
Այնտեղ քաշես օրն ու կեանքը,
Խտրանցտ գեղն ասեմ:

Խտրանցա գեղն խօսեմ,
Մէկը ասեմ, մէկը լսեմ.

Իմ տեսածս ուղիղ ասեմ,
Մարդկանց պատիւն ասեմ:

Պատիւ շատ կայ Ազարակում,
Անպատիւն հակառակում,
Լուսեներին պախարակում,
Ես Տանձթափա գեղն ասեմ:

Տանձթափայ էլ ջոկ տեսակ ա,
Մենակ ապրելը կըակ ա,
Նա Դափանեն զըոշակ ա,
Եղավարդա շէնն ասեմ:

Եղավարդը հացի շէն ա,
Հացն էլ շատ, մի լաւ բան ա,
Հացը Աստծոյ նման ա,
Ես Թորոս իշխանն ասեմ:

Իշխանն է այնտեղ ծնուած,
Իսկական այնտեղ է թաղուած,
Շաֆֆին եկաւ, տեսաւ գնաց,
Վկիժենեսա գեղն ասեմ:

Վկիժենեսա գեղումը մնաս,
Նմանը չկայ որտեղ գնաս,
Շատ է լինում խնձոր, գիլաս,
Ես Մողեսայ տեղն ասեմ:

Մողեսայ տեղը շատ փոր է,
Աղբիւրը մի քաղցը ջուր է.
Միջի մարդը հիւրասէր է,
Գողալ Զէյւու գեղն ասեմ:

Գողալ Զէյւու գեղի նման,
Նորան Շահրուլաղի նման,
Այնպէս մէկը Ղարաբաղ կայ,
Ես Գէորգ իշխանն ասեմ:

Իշխան է պարոն Գէորգը,
Նայ է Զէյւու գեղի վարքը.
Զէյւացիք տան Աստծոյ փառքը,
Շինեց ուսումնարանն ասեմ:

Ուսումնարանը գեղի վարդ է,
Պարոն Գէորգը տղամարդ է,
Իմ ասածը բոլորը դորդ է,
Հիմի ես իմ գեղն ասեմ:

Աշըդ չես գնում էրկենանց,
Ապա չես առում գեղս մնաց,
Աշըդ Առաքել Յարութիւնեանց,
Քերջն թուականն ասեմ:

1909-ին, մարտ ամսի 19-ին,
Ողորմի կասեմ Յարութիւնեանին,
Բնուանուր Ղափանն ասեմ:

Գ Ո Վ Ս Ա Ն Ք.

Ագուիս կար Խոջամիրեանց
Հայրապետի հարսանիքը,
Բարեկամները հաւաքուեցին,
Ուրախացան ընտանիք:
Միջնորդ բերին հարսնացուին,
Ուկի, ալմաստ մատանիքը,
Ուրախ սրտով պատրաստւեցին,
Երկու հարիւր խնամիքը.
Ամեն մէկին մէկ ծառայ կար,
Որ պահպանի իւր ձիանքը:

Հանգամեջցի Մուղգուսի Կարապետի տունն ասեմ,
Այնպէս զօրեղ մարդ չեմ տեսել, նրա քաջութիւնն
ասեմ,
Լաւ պատուելի, լաւ գովելի ես, Մուղգուսու
գինն ասեմ,
Պատիւը չափից աւել է, լեզուով ես որ մինն ասեմ,
Այն Մուղգուսի ձեռքով արած արարմունքն:

Վեց հարիւր մարդկանցը, բոլոր այնպէս սարքին
կառավարեց,
Վաթսուն արշին չաղիր շինեց, բոլորը տակը
տեղաւորեց,

Ես քանի կենացներ ասեմ, ամենն էլ ուրախ խմեց,
Լեզուով ուսուայ կանչելով, բարեկամներին
ճանապարհեց,
Օրդուբաղու քաղաքիցը լսան, եկան այն լոթիքը:

Լոթին ասեց, այ թոյբաշի ընծայեցէք իմ խալաթը,
կարապետ աղան հանեց տուտւ խաղնի
քսանհնգանոցը,
Լոթին պատուեց դէն ձգեց, ասաց, տուէք
հարիւրանոցը.
Հայրապետ աղան կոխ տուտւ իսկ կարուեց
լոթու հացր,
Պրիստաւը լոթուն բռնեց, տարաւ գցեց այն
դժոխքը:

Երբ հարսանիքը եկաւ Ագուլիս զիւղի զրադը,
12 հատ փրշանկ գոռաց, ձայնը հասաւ աղանց
օթազը,
Հինգ հարիւր փանար կպցրին, չըաղւան եղաւ
փողոցները,
Սարգիս ապէրը բարե եկաւ, համ էլ երգեց
իրա խաղը,
Ուրախ ուրախ բառբառում էր, ստեղծողին
տուած փառքը:

Պուճուր ուստայ Աւագիմը, տես ինչ օյիններ է
հանում,

Վառոտեց թղթի միջին տեսակ տեսակ բաներ
շինած.
Դնում էր տափումը թաղում, եօթ անգամ ձայն
էր հանում,
Բաղինը որ բաց էր թողում մարդկանց
շալվարները մնաց,
Զարխի փալանգ եմ տեսել նոր շուրտալի հնարքը:
Այս խօսքերը ես ասում եմ 1889 թուին,
Այսպէս հրաշք գործեր տեսայ Օգոստոսամսի 5-ին,
Երեկոյեան ժամանակ, ասում եմ ժամի 9-ին,
Օտար փեսաներիս, քրոջներիս կենացն է,
Ածեցէք Շւանաձորու, Թաւրիզու, Թիվիլիզու,
Կախեթու գինին,
Կարապետ աղան օփ, օփ, արաւ բոլորն էլ ուռայ
կանեն,
Քառասուն աղջիկ սկսեց Հայաստանի ազնիւ երգը:
Կեցցէ Հայրապետ աղայ կեցցէ, կեցցէ կարապետ
աղայ կեցցէ,
Կեցցէ Մարգար աղայ կեցցէ, կեցցէ Սմբաթ
աղայ կեցցէ,
Կեցցէ Հայրապետն, Ագուլիս կեցցէ, կեցցէ
Խոջամիրեանց կեցցէ,
Ամսի 6-ին Կիրակի օրը, կեցցէ նրանց արարմունքը:
Ամսի 6-ին Խոջամիրեանց բախճի նստած
բազմութիւնը,

Ուղիղ 600 անձիք կար, մարդ ու աղջկի, կամ
տիլինը,
Ռօմ, պիւայ, շամպանսկի, լիմոնադ կանեակ
անունը,
Շւահածորու, թաւրիզու, կախեթու գինուն,
Զեմ կարող լեզուով պատմել նրան արած
արարմունքը:

Քսան պովուր ունէր, բոլորը կերակուր եփող,
Տասներկու լակէյ ունէր, թէյ շինող, սփոցը
պահող,
Երեք մարդ միշտ կարդուած էր հաւերը, ճահրը
թեփող,
Մի պառաւ պովուր տեսի, սառնոցում կերակուր
եփող,
Զեմ կարող լեզուով պատմել, նրանց արած
պատիւը, փառքը:

Դէն վեր կաց զունադ քոք արա, եալի փչի,
ուստա Խուտի,
Բաղի մարդ գինով ընկան, խօսում էին տուղի
սուղի,
Փոշտ մեստերին քեփաւ ընկաւ, զլուխ զիսկեց
մի հաստ փետի,
Ամես մարդի փող ունենայ, մարդուս մի
մարդութիւն պիտի,
Աստուածակոյս արժանիէ եպիսկոպոսի օննանքը:

Արևմուտքից մինչև արևելք, այսպիսի հարսանիք
չեմ գեսել,
Միթէ միայնակ ինձ եմ ասում, տեսնողներն
են զարմացել,
Լաւ ուտելով, լաւ խօսելով, մահուրի սիգահ ասել,
Զեղ համար յիշատակ մնաց Աշրդ Առաքելի երգը

ՄԵՆՅԻՉԵՐ ԸՒԾԵՑՆԻ ԲԵՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ.

1904 թուին Գիւղգիւմ զիւղացի Մանուչար
Աւագեան,
Հոկտեմբեր ամսի ասում եմ եօթին,
Ես այսպէս եմ զրում, Մանուչար Աւագեան:

Առաջ լոյս դառնայ, քո ծնող ծնողդ,
Յետոյ վարքար լինի քո ապրած զիւղդ,
Աստուած ինքը տուաւ քո գանձդ, փողդ,
Քեզ արժանի լինի, Մանուչար Աւագեան:

Գլուխ եկաւ պրծաւ ուսումնատունդ,
Աստուած ինքը օրհնի գործդ ու բանդ,
Մեզ համար պարծանը քո աստիճանդ,
Ղափանու մհալում, Մանուչար Աւագեան:

Երկու տարում շինուեց, վերջացաւ պրծաւ,
Վարժապետները եկան միջումը նստան,

Ուսանող երախեքը բոլորը գրւան,
Տունդ շէն մնայ, Մանուչար Աւագեան:

Սիւնեաց վիճակում մի տղամարդ ես,
Ղափանումը մնաց, հոտաւէտ վարդ ես,
Ուսումի համար քեզ քուն չունես, զարդ ես,
Քունդ զարդդ բարի, Մանուչար Աւագեան:

Մանուչար Աւագեան, մտքերդ լաւ է,
Լուսաւոր մարդիքը գործդ կը գովէ.
Քո արած մտքերդ մի անտակ ծով է,
Միտքդ անդին քար է, Մանուչար Աւագեան:

Մանուչար Աւագեան լուրդ գնաց,
Ղափանու վիճակում մշտական մնաց,
Ում խելք ունի, ուտի պտարաստ աղ ու հաց,
Աղ ու հաց պտարաստող, Մանուչար Աւագեան:

Ուսումնարանդ նման է ինչպէս գետինը,
Քնքոյշ ծաղկով ինչպէս դաշտն ու այգին.
Չեմ կարող գնահատել ուսումնարանի գինը,
Անդին յաիշատակ է, Մանուչար Աւագեան:

Ուսումնարանդ նման է, ինչպէս երկինքը,
Աստղերով փայլուած գեղեցիկ դէմքը,
Թշնամիդ տեսնելուց քաշի տանջանքը,
Թշնամիդ տանջող, Մանուչար Աւագեան:

Ուսումնարանդ նման է, ինչպէս լուսնեակ,
Գիշեր ու ցերեկ ման է գալիս մենակ.
Տեսնողը քեզ կասի բարի յիշատակ,
Բարի յիշատակ ես, Մանուչար Աւագեան:

Ուսումնարանդ նման է, ինչպէս արեգակ,
Բոլոր աշխարհիս նա տալիս է փափակ,
Անման, անփախման է կենդանի զաւակ,
Անդին զաւակ է դա, Մանուչար Աւագեան:

Զաւակդ նման է Յովեան Մարգարէին,
Սյոր էլ յիշում է բոլոր աշխարհին.
Նման է Տաթեայ այն սուրբ տաճարին,
Տաճարը քեզ պահապան, Մանուչար Աւագեան.

Փառք տուէք Աստծուն պարոն իշխաններ,
Ղափանու վիճակը չը մնաց անսէր.
Ուսումաւոր մարդը չի տպրի անսէր,
Գու սէրի պատճառ ես, Մանուչար Աւագեան:

Գիւղիւմու գիւղացիք, մատաղ մորթեցէք,
Թշնամու զլուխը խկոյն ջարդեցէք,
Բաւական է քնած, քնից զարթնեցէք,
Քնից զարթնեցող Մանուչար Աւագեան:

Աշը Առաքեին եմ, զիւղս երկենանց,
Ազգանունս հարցանես, Ցարութիւնեանց,
Այս խօսքը զրեցի մշտական մնաց,
Աշըդ է յիշում, Մանուչար Աւագեան:

ՀՊԱՐՏ ՏԻԿՆՈԶ

Եկայ մօտովդ անց կենամ,

Ուռը ինձնից ծանրը տիկին.

Չարդ կամ բարիդ իմանամ,

Ուռը ինձնից ծանրը տիկին:

Ազնիւը վեր կացաւ տեղան,

Բաց արաւ ինձ համար սեղան,

Պատիւդ կենայ քո հօր բեղան,

Ուռը ինձնից ծանրը տիկին:

Եթէ ես աշըդ եմ, մարդ չեմ,

Տիկին, դու նստում ես ընդէմ,

Մարդութիւնս քեզ կ'յայտնեմ,

Ուռը ինձնից ծանրը տիկին:

Աշըդ Առաքելն եմ, ով եմ,

Լաւ տիկնոջ, լաւ կը գովեմ,

Վատ տիկինը կը նզովեմ,

Ուռը ինձնից ծանրը տիկին,

ԱՔՈՒ ՊԵԼՈՒՆ ԷՄԵՐԸ

Էծերը եկել են էստեղ,

Միամիտ կաց, Աքու Պելի,

Բոլորը հաւաքում մի տեղ,

Միամիտ կաց, Աքու Պելի:

Դու կանչեցիր, ես լսեցի,

Պատասխանդ ես տուեցի,

Էծերդ ես ականեցի,

Ահա այստեղ են, Աքու Պելի:

Երկուսը, մեր տուած ու էծը,

Մէկը ծեր, մեծ կարմիր էծը.

Քամար թաքար, պոզը ցեցը,

Ահա այստեղ են, Աքու Պելի:

Աշըդ Առաքելի մոմը,

Պարան տուր մեր պատի դումը,

Էծերը արել եմ դումը,

Միամիտ կաց, Աքու Պելի.

ՆԱՄԱԿ ԽՆԴԻՐ

Աւագ, քեզ ինդրում եմ, միտքդ ինձ ասես,

Ասա տեսնեմ, խի չես ուղարկում իմ եարըս,

Ես հայր, դու որդի, պարզեպարզ խօսես,

Զուխտ ապրած, սովորած, ոնց կլինի ճարըս:

Գիշեր ու ցերեկ լինում եմ տխուր,

Օրս ու կեանքս անց է կենում իզուր,

Առանց իմ պատաւս մնացած տխուր,

Իմանում ես, այդ է իմ սրտի ճարըս:

Այս քանի բառերս ինչպէս զրում եմ,
Որդի ձեր մեղքերը բոլորը ներում եմ,
Ինքս իմ պառաւս անկեղծ սիրում եմ,
Լաւ կ'կարդաս որդի, այս քանի բառը:
Իմ մին օրս անց է կենում մի տարի,
Մի տարումը շատ կայ չար ու բարի.
Իմ պառաւս չեմ տալ անգին քարի,
Դա է գնահատում իմ անգին քարս:

Աշուղ Առաքելն եմ բիւթիւլ ընկերդ,
Ինձանից մի կարիլ թանկագին սէրդ.
Այսօր միտս ընկաւ թառամ ունքերդ,
Ունքերդ է կանաչ կարմիր կամարս:

ԱՅԻԲ - ԲԵՆԻ ՎՐԱՅ.

Ա.

«Այիբը» Աստուած է, որ մեզ պահում է,
Իմանում էք, պարզ ասեմ ժողովուրդ,
Ինքը հեռու, միտքը մեզի շահում է,
Գրա համար ես ի՞նչ խօսեմ ժողովուրդ:

Բ.

«Բն» բանն է, նա մեզ համար միշտ մնաց,
Որ աշխատենք, բերենք ուտենք մեզի հաց,
Չը սխալւես, այս խօսքերս լաւ իմաց,
Պատասխանն ես ի՞նչ գրեմ ժողովուրդ:

Գ.

«Գն» զինին է, նա մեզ համար բաժակ է,
Տարին հինգ օր նա մեզ համար փափակ է,
Ուժը շատ է, բայց մարմինը բարակ է,
Սրբուած սուրբ պէտք է ուտիլ ժողովուրդ:

Դ.

«Դն» դաշան է, վարենք, ցանենք ուտելի,
Աշխարհում ենք, կեանք ունենանք ապրելի,
Լեզու ունէք, ասել, լսել, խօսելի,
Դուք ներեցէք ես, էլ խօսեմ ժողովուրդ:

Ե.

«Ելը» երանի որ յիշւում է մշտեկան,
Ամեն մարդի մէկ օր կլինի դատաստան,
Այն կեանք կլինի կշիքուհարց այսպէս բան,
Իմ պարտքս է ձեզ յայտնում եմ ժողովուրդ:

Զ.

«Զան» զրկւած սատանայ խաւար ա,
Անուսումը ի՞նչպէս խօսի, տաւար ա,
Իմ զրածս հասկանողի համար ա,
Այս բաները դուք էք տեսնում ժողովուրդ:

Է.

«Էն» էնա, որ ուտում ենք, մեզ հաց ա,
Այ մարդ լսէ պարզ եմ զրում իմացա.
Երանի այն մարդին, որ անհարց ա,
Նրան ես էլ երանի տամ ժողովուրդ:

թ.

«Ըթը» ընկաւ Աղամաս ցեխ մարդացաւ,
իւր կողիցը նախշուն Եւան ստեղծաւ,
Բոլոր մարդիք նորանցանից բազմացաւ,
ես իմ միտս միշտ պահում եմ ժողովուրդ։

թ.

«Թոն» թանկագին քար է, որ գին չունի,
Տես, երկինքն է բարձր կանգնած, սիւն չունի.
Հոռի ծառին պտուղ չունի, բան չունի,
Դուք տեսնում էք, դէն ինչ ասեմ ժողովուրդ։

Ժ

«Ժէն» ժառանգն է, մարդիս համար պտուղ է,
Հայրը մեռնի որդուն տեղը կը թողէ,
Բարի որդին ծնողներին յիշող է,
Բարի որդուն բարի օրհնեմ ժողովուրդ։

Ի.

«Խն» իմն է բոլորովին քեզ չեմ տալ,
Ես կարծում եմ այս խօսքերս չի սխալ.
Անխրատին հարկաւոր է խրատ տալ,
Որ չի լսէ, դէն ինչ ասեմ ժողովուրդ։

Լ.

«Լն» լացն է տխուրների համար է,
Որովհետեւ սիրտը, միտք տկար է.
Ես վճռում եմ, լաց լինողը յիշար է,
Որ ծնւել եմ, մեռնելու եմ ժողովուրդ։

Խ.

«Խն» Խաչն է, Քրիստոսին խաչեցին,
Տանսերկու մեխ մարմնին խփեցին.
Տարան մարմար հանգիստումը թաղեցին,
Քրիստոսաւ ձեզ օրհնում եմ, ժողովուրդ։

Ծ.

«Ծան» ծածուկ է, ծածուկ պահի չի տեսնան,
Աշխարհումս մարդիք շատ կան զանազան.
Չափէ, կտրէ, յետոյ այ մարդ բաց բերան,
Ինչու համար սխալ խօսեմ ժողովուրդ։

Կ.

«Կն» կեանքն ով որ տեսնէ, երանի,
Իհարկէ, որ Աստուած կտայ քեփ կանի.
Երան կեանքը նա միշտ ուրախ կտանի,
Ես էլ տանեմ չի փոշմանեմ ժողովուրդ։

Հ.

«Հոն» հարազատ պարզ խօսքն է ասողին,
Ափսոս է, չէ, որ չի ասես լսողին.
Խօսքդ ասիր Աստուածազգոյշ նստողին,
Այսպէս մարդը շատ կսիրեմ, ժողովուրդ։

Զ.

«Զան» ձուն է, որ միշտ ածում են հաւերը,

Եկէք ասենք դալար կենայ թերը.
Կարմիր կանեն զատիկ օրը լաւերը,
Ես էլ ձեզ հետ կատարում եմ ժողովուրդ։

Ղ.

«Ղատը» դրկենք նա մեզ համար բերի հաց,
Դորդ եմ ասում, սուտ չեմ տոսում, լաւ խմաց.
Սաթայէլը բարի գործեց, ետ մնաց,
Նա միշտեկան զուրկ է ապրում ժողովուրդ։

Ճ.

«Ճէն» ճարն է բժիշկները գործում են,
Հիւանդներին բժիշկները փորցում են.
Օգտաւոր հիւանդները պլծնում են,
Ասեք տեսնեմ, ի՞նչ էք կարծում, ժողովուրդ։

Մ.

«Մեն» մոմն է, որ վառում են սուրբերին,
Աստուածատուն նախշուն կանգնած պատերին.
Աւետարան ձեքին, կարդող տէրտէրին,
Ես երեսիս խաչ եմ քաշում ժողովուրդ։

Յ.

«Յին» յիմարն է, ուսում չի առնում լինի մարդ
Նա կմնայ ինչպէս որ կայ. անհոտ վարդ.
Այնպէս մարդը կեղտոտ կինի, ինչպէս տարթ,
Անկարդողի մէկը ես եմ, ժողովուրդ։

Ն.

«Նուն» նամակն է, հեռու տեղից գրում է,
Մէկս մէկուց սուրբ նամակով խօսում է.
Փառք Աստուծոյ, բարի լուրեր լառմ է,
Աւագիցը ես էլ լսեմ, ժողովուրդ։

Շ.

«Շան» շատն է, ամենայն մարդ կսիրի,
Աշխատաղը կաշխատի կը բերի.
Ուսումաւորը անուսումին կների,
Ես պէտք է ներող լինեմ, ժողովուրդ։

Ո.

«Ոն» ոտներդ է, առանց թեր թոչում է,
Տեսնում ես, որ ամեն երկիր գնում է.
Փայտօնի պէս նա քո տակիդ խաղում է,
Ես էլ ոտով միշտ խաղում եմ, ժողովուրդ։

Չ.

«Չան» չարն է, բարի գործի հակառակ,
Չուր տեղիցը մարդի կանէ խայտառակ.
Մեծ ցաւ է հա, մարդկանց համար անառակ,
Այսպէս մարդից ես կփախչեմ, ժողովուրդ։

Պ.

«Պն» բարին է, որ ասում էք բարի օր,

Բարի մարդը մեզ չի գցիլ սար ու ձոր,
Ումից առնես, նրան փոխը շուտ ետ տուր,
Ետ տողին ես էլ կտամ, ժողովուրդ:

Զ.

«Զէն» ջուրն է, որ խմում ենք լիանում,
Մեր ձեռքերը, կեղտոտ երեսը լւանում.
Այգիներ, ծառեր բար պտղի տիրանում,
Իմացէք, ես այգեպան եմ, ժողովուրդ:

Ռ.

«Ռան» ռամիկն է, ռւսում չունի ի՞նչ անէ,
Քերան ունի, որ խօսում չի խափան է.
Տեմում էք, որ նա տաւարի նման է,
Թէ լաւ, թէ վատ, ես տւել եմ, ժողովուրդ:

Ս.

«Մէն» սուտն է, սուտ ասողը կսիրի,
Ամեն րօպէ իրա միաքը կը բերի.
Մըսն, նրան գլխին գտակ, կ'կարի,
Ես չեմ կարող գտակ կարեմ, ժողովուրդ:

Վ.

«Վլն» վախն է, վախը կապրի ավաս,
Այս խօսքերս լաւ հասկացէք դուք մաս—մաս.
Ամեն մարդի պէտք է լինի պրիպաս,
Աւագ լսի, քեզ կսպասեն ժողովուրդ:

Տ.

«Տիւն» տէրտէր է, որ ասում ենք «օրհնեա տէր»,
Տեսնում ես, որ նա հաքած է սև պատկեր.
Աւետարանի խօսքերը դու միտդ բեր,
Զեզ օդնական շատ խնդրեմ, ժողովուրդ:

Ի.

«Րէն» բօպէն է, նա միշտեկան ման է գամ,
Ժամացսյցը շրջուում է, ձախ է տամ.
Ազնիւ մարդկանց մօտ կլինի՝ ես տեսամ,
Այնպէս մարդկանց հողումը ապրեմ ժողովուրդ:

Յ.

«Յոն» ցաւն է, Աստուած ինքը ճար անի,
Երիտասարդ տղամարդկանց չի մանի.
Մահը թող գայ, ծերունի մարդկանց տանի,
Ես էլ ծեր եմ, շատ կարօտ եմ, ժողովուրդ:

Ի.

«Ին» ումն է, թող գայ նա վեր առնի,
Փոքը զրեր մեծ—մեծ գրերին խառնի.
Վեր կնզնի, ձեռքիդ միջին պինդ բռնի,
Վայ թէ կորաւ, ես ի՞նչ անեմ, ժողովուրդ:

Փ.

«Փն» փառքն, որ ասում ենք «փառք Քեզ Տէր»,

Այ մարդ ասեմ, ասածներս միտդ բեր.
Ուսում առէք, որ չի ապրէք դուք անսէր,
Դրան համար չարչարւում եմ, ժողովուդ:

Ք.

«Քէն» քարոզն է, կրօնական մարդ կասէ,
Հայոց համար ծանր լուծ է, որ լսէ.
Թէ չի լսէ, մեր Հայրիկը ի՞նչ ասէ,
Ա. Աստուած «Ի» «Մ» Աստուածը իմ, ժողովուրդ:

Հազար իննհարիւր տասնեւերեքին,
Օգոստոս ամսի ասեցի վեցին.
Ողորմի կասէք բոլորդ, Յարութիւնեանցին,
Չի խնայէք՝ ես խնդրում եմ, ժողովուրդ:

Զ Կ Ա Մ .

Ես պառակն չափարելով,
Բո ի՞նչդ եմ տանում չկամ.
Ուզիդ ճանապարհ շինելով,
Միթէ աչք եմ հանում, չկամ:

Քաշ մի գնալ, բարձր գնա,
Դու էլ ինձ հետ ուրախ մնա,
Միթէ դու ես չար սատանա,
Հար խօսքով ես հովանում, չկամ:

Զարութիւնը ի՞նչ համբաւ է,
Իսկ սէրութիւնը լաւ է,
Վերջի հազուսադ կտաւ է,
Վերջը ի՞նչ ես տանում, չկամ:

Ի՞նչ շինեց չկամը, դողը,
Հրեշտակից բռնեց դողը.
Թո երեսիդ կածեն հողը,
Ի՞նչի ես ուրանում չկամ:

Ուրաց Աշուղ Առաքելը,
Նա է Միւլքաչափու պէլը.
Անրան անգործ, նա է ծոյլը,
Նա էլ խօսք է հանում, չկամ:

ԱԳԱՀ ՄԱՐԴԱԽԱՓ.

Մէկ օր գնացել է փայտի,
Չափնու Կոյզուց Ալէքսանը.
Մարդիս զործը այնպէս պիտի,
Պատահի աղէսին քունը:

Տեսնում է, աչքերն էի բնում,
Գլխին տալիս է սպանում.
Մարմիկցը մորթին հանում,
Տանում գնում իրան տանը:

Բաղդասարանց Սուղին լսաւ,
Զավինու գիւղը շուտով հասաւ,
Ալէքսանին «բարի օր» ասաւ,
Այսպէս բացաւ իւր բերանը:

Նստեց Ալէքսանի մօտը,
Ասեց իրան չալչալ սուտը.
Այս է մարդկանց անհոտը,
Երէցւանքու մէկ իշխանը:

Ի՞նչ արիր ազւէսի մորթին,
Ծախելու ես գիտեմ արդէն.
Մորթին դրաւ իրա ձեռքին,
Դա է իւր ուրախութիւնը:

Մանէթուկէսի գին արաւ,
Ալէքսանին փափաղ կարաւ.
Մորթին իրան հետը տարաւ,
Տես ինչպէս է դրան բանը:

Էգուց կըգաս կտամ փողըգ,
Լոյս դառնայ եղբայր, ծնողդ.
Օրհնուած է արարողդ,
Օրհնուի ձեր գերեզմանը:

Եքսը Ալէքսանը գնացաւ,
Մորթուն փողին մէկ բան բացաւ

Սողոմօնը շուտ ուրացաւ,
Քեզ ի՞նչ, մեռել է մեր շունը:

Ալէքսանը գնաց գանգատ,
Սողոմօնը բան բռնեց վատ.
Ինձ նրանից արա ազատ,
Սուղուն կանչեց Միրզաջանը:

Խի՞ չես տալիս մարդիդ հախը,
Քո սրտումդ չի կայ վախը.
Ուզում ես գու ուտես լոխը,
Կէսը քեզ, կէսը նրանը:

Աշուղ Առաքել դու մէկ բան,
Շարունակիր խօսքդ իշխան.
Քեօխւան տեսաւ կաշառք չկան,
Շուտով վճռեց այդ բանը:

ՈՒՍՈՒՄԵԿՈՐԸ ԸՆՈՒՍՈՒՄԻՆ ԽԵԲԵՅ.

Մէկ օր պրիստաւը եկաւ,
Միւկու Զավինու գիւղումը նստաւ.
Սուղեաներին կանչեց բերաւ,
Մէկը մէկու քալադ դրաւ:

Կամ սուզեայ Գրիգորին ճակատը,
Կամ սերմաքաշին ճակատը.
Տնումն էր թողել փեշատը,
Կէւուն զլիին փափադ կարաւ։

Գրիգորն ասաց.

Արի ընկեր, խորհուրդ բանանք,
Ես ու դու մի բան իմանանք,
• Վիճակում պարզ երես մնանք,
Այսպէս բարի խորհուրդ արաւ։

Կէրին ասաց.

Դու կիմանաս դրանց կարգը,
Գու ես մեր գրասենեակի վառքը.
Քեօխւին կամ սուզեաների զօրքը,
Իւր նշանը հանեց տւաւ։

Գրիգորն ասաց.

Մարդիս ընկերը այսպէս պիտի,
Որ ընկերի խօսքը լոի.
Ընկերը ընկերին կատի,
Ահա եղբայր այսպէս է լաւ։

Կէրին ասաց.

Կէւին քո խօսքդ կոտրի,

Աստուած էլ իւր վիզը կը կոտրի.
Դու իմ զլիիս խելք զրիր,
Այս խօսքերս թող լինի ցաւ։
Գրիգորն ասաց.

Ճնորհակալ եմ քեզանից կէւի,
Ով որ լսի քեզ կը գովի.
Պրիստաւը կը նզովի,
Ասաց, յետոյ ինքը մտաւ։

Գրիգորին շատ լաւ սիրեց,
Յետոյ կէւուն կանչեց բերեց.
Հօրն ու մօրը շատ հայնոյեց,
Վեր կացաւ և զլիին տւաւ։

Ասաւ քո նշանը ուր է,
Իմ հայնոյեանքս քեզ զուր է.
Հիմի քո ապրելո զուր է,
Ասաւ, էլի զլիին տւաւ։

Ինչով իմանամ սուզեայ ես,
Առանց նշան ես, յիմար ես.
Հիմի զրկեմ դու կը բերես,
Քոէ տւաւ և զուրս զցաւ։

Փոշմանեց իւր նշան տալը,
Ինձ պէս կլինի պելը.

Եկաւ Աբրհամանց կալը,
Դէպի Սևաքարը կանչաւ:

Դէպի Սևաքարը կանչաւ,
Մըջանանց Դաւութը լսաւ.
Բերողին ձեռքիցը տուաւ,
Հիմիկ Եախիցը կախ տւաւ:

Մտնեմ պրիստաւին մօտը,
Բաց անեմ Գրիգորին սուտը.
Ուլունց Ասրուն դրած փոտը,
Գլխիս խելքը հիմիկ բերաւ:

Տունդ քանդւի, Գաղիւնց Քալի,
Տղան սատանայ կը նալի.
Գլուխս զցեց դալմաղալի,
Վիճակում խայտառակ արտւ:

Աշուղ Առաքելին ձարը,
Կէւուն գլխին ընկաւ քարը.
Ինչ անեմ քեզպէս յիմարը,
Քեզի համար բան ստեղծաւ:



ՄՈՒԽԱՄՄԱԶ ԳԵՂԵՑԿԱԿԱՆ.

Չայնդ հասկացամ եկամ, քեզ անեմ թամաշ,
Փիւրիւզայ,
Քանի գեղեցիկ տեսամ դու ամենից բաշ, Փիւրիւզայ
Աստուած է ձեռքով քաշել սիրուն դարամ դաշ,
Փիւրիւզայ,
Ով քեզ տեսնում է, գնում կանչում է վաշ-վաշ,
Փիւրիւզայ:

Թշերդ բացւած վարդ է, ըսանդ է տամ գիւլինման,
Ծամերդ թոխ-թոխ ծամ է, շուշանի սմբուլինման.
Պոռշներդ շատ քաղցր է, համ է տալիս բալինման,
Ով պոռշներդ ծծի դու, ասի անուշ Փիւրիւզայ:

Քո ծոցդ զրախտի պէս արքայութեան սագ եմ
ասում,
Ծծերդ սպիտակ գմակ, գիւլ բոստանի թաղ եմ
ասում.

Աչքերդ լոյս է տալիս, սաղ վառած չըադ եմ ասում,
Տուրքումդ կանգնել եմ, խեղծ ազատիր դոսսաղ
եմ ասում:

Գու ուղտ ես, ես, մի ոչխար, ջանս քեզ մատաղ
եմ ասում.

Աշուղ Առաքելը եղաւ քեզ համար բէյնիւշ
Փիւրիւզայ:

ԳՈՎԱՍՏԱՆԻ ԵՒ ՕՐԴՆԱՆԻ.

Անմահ Աստուածը քեզ պահի,
Պարոն բժիշկ Խաչատուրեանց,
Երախոցդ սիրալ շահի,
Պարոն բժիշկ Խաչատուրեանց:

Անունդ է գրւած Արսէն,
Ծնողներդ են գրել արդէն,
Արսէն կանչեն փափագ առնեն
Պարոն բժիշկ Խաչատուրեանց:

Մարդ ու կին դուք բարի զաւակ,
Աստուածանից առէք փափագ,
Ինչպէս առաւ որդի Սահակ,
Պարոն բժիշկ Խաչատուրեանց:

Տունդ գալուց լիանում են,
Թէ հայ չլինեն հայանում են.
Մեծ պատուի տիրանում են.
Պարոն բժիշկ Խաչատուրեանց:

Հիւանդներդ առողջանան,
Գնան մեծ կեանքի տիրանան.
Քո պատիւդ չի մոռանան,
Պարոն բժիշկ Խաչատուրեանց:

Աստուած պահի վարսենիկդ,
Նա է կեանքի կրօշագդ.
Թող կանաչի քո փափագդ,
Պարոն բժիշկ Խաչատուրեանց:

Աշուղ Առաքել Յարութիւնեանը,
Ազօթում է միշտ իւր տանը.
Զեզ պահապան սուլբ նշանը,
Պարոն բժիշկ Խաչատուրեանց:

Ա Ղ Ա Չ Ա Ն Գ .

Թնձ այսպէս անող Աստուածը,
Ես խնդրում եմ, ձեզ չի անի.
Այսպէս է եղել իմ բանը,
Զեր օրը թող ուրախ տանի:

Զի կարծես թէ ցաւս լու է,
Զհար ու դարի համբաւ է.
Անփորձ մեռած մարդը լու է,
Լսողը երանի կանի:

Կուչ է ածել ոտ ու ձեռքս,
Տեսնում ես ծուել է սարքս.
Էլի ես չեմ կտրում փառքս,
Թնձ տեսնողն էլ փառք անի:

Զամի կողմս թուլացել է,
Այի կողմս թուլացել է.
Յաւս ուդար մնացել է,
Աստուած ինքը մի ճար անի:

Մի տարի մնացի պառկած,
Հացից ջրից կարւած.
Ամեն բանից զրկւած,
Յարութինեանցը ինչ անի:



Ն Ա Մ Ա Կ Ա Կ Ա.

Դու որ գնաս իմ որդկանց մօտը,
Աւագին, Սանթուրին շատ բարե կանես.
Նրանք են իմ կեանքիս անուշահօտը,
Ինչպէս ինձ տեսնում ես այնպէս կալատմես:

Նամակ, առաջ գնաս կասես Աւագին,
Աստուած արժանացնի իրա փափազին.
Ինչպէս չայր Աբրահամ որդի Սահակին,
Աշխարհիս երեսին չի մնայ անտես:

Նամակ, երկրորդը դու ասես Սանթուրին,
Ասա ջոկի իւր չարն ու բարին.
Սրտովս կանչում եմ այն սուրբ տաճարին,
Ասածս լսելու իսկոյն կալատմես:

Նամակ, բաներ շատ կա չեմ կարում զրեմ,
Վախում եմ թէ զրեմ, վատ խօսք լսեմ.
Ծածուկ չեմ զրում, կը կանգնեն ընդեմ,
Ուրիշ բան չի տսես, զրածս կասես:

Նամակ, դու կալատմես իմ աչքիս հովիր,
Տեսնում ես ծեփել է ձղոպուրի չոփը.
Կարւել է կնոջս սրտի ինսափը,
Իմ կնոջ ինձ վերայ ծիծաղը կասես:

Հազար ութհարիւր իննասուն եօթին,
Նամակս զրում եմ որդկանց բախտին.
Աստուած արժանացնի այն ոսկի թախտին,
Աւագի, Սանթուրի հետ կը խօսես:

Աշուղ Առաքելն եմ, ուրիշ ինչ զրեմ,
Աւագը, Սանթուրը միշտ մտաքերեմ.
Առանց ձեզի, որդիք, չեմ կարում ապրեմ,
Այնքան չես հաւատալ — դու որդի տեսնես:

Խ Ա Պ Ի Բ Ք Բ ։

Խնդիրք ունեմ ինձ քեզ, ազնիւ Սիմէօն Բէդ,
Իմ որդի Աւագին ճար եմ պահանջում.
Քո մաքուր բերանովդ ինդրում եմ օգնէք,
Իմ որդի Աւագին ճար եմ պահանջում:

Իշխան ես, ասում եմ իսկական ցաւս,
Առանց իմ Աւագը մեռնեն է լաւս.
Մէկ օր ես ոչ ապրեմ, հազնեմ կտաւս,
Իմ որդի Աւագին ճար եմ պահանջում։

Սիմէօն Բէգ հասցրու քաղցր պատիւդ,
Ամբողջ չեմ մոռանալ, զրում եմ թիւդ.
Իմ որդի Աւագին շոք պահի թևդ,
Իմ որդի Աւագին ճար եմ պահանջում։

Քո որդիւդ էլ հասնի իրան հասակին,
Արժանանաս տեսնես որդուդ պսակին.
Քո ձեռքով օգնես որդուս Աւագին,
Իմ որդի Աւագին ճար եմ ուզում։

Հազար ութհարիւր իննասուն եօթին,
Փետրւար ամսի ասում եմ ութին.
Առաքել Յարութինեան Աւագը իմ որդին,
Իմ որդի Աւագին ճար եմ ուզում։

Աշուդ Առաքելը ես եմ, ճանաչի,
Ես օրհնեմ, քո սի օրերդ կանաչի.
Այսպիսի ծէն արայ, չարը ամաչի,
Իմ որդի Աւագին ճար եմ պահանջում։



ՇՆՈՐԱՎԱԼՈՒԹԻՒՆ.

Զախար, քեզ շատ պահի Աստուած,
Քաղցր իշխան ես ինձ համար,
Քո պատիւդ անթիւ մնաց,
Անմահ անվախճան ինձ համար։

Ղրկած սազդ ես ստացի,
Զեռքս առայ ուրախացի.
Մայր աթոռին խնդրւեցի,
Միշտ ուրախ ապրես ինձ համար։

Գանձակումը գու ես տէրըս,
Կամ տէրս ես կամ թէ հերըս:
Թազագիւլն է հոգու քոյրս,
Պաշար էք կապել ինձ համար։

Գրածներս Մանեան կարդի,
Զի ծիծաղես Մանեայ որդի,
Նման էք ինձ համար վարդի,
Հոտաւէտ վարդ էք ինձ համար։

Աշուդ Առաքելը կանչի,
Պարոն Զախարը չի ամանչի.
Թազագիւլը նոր կանաչի,
Մի ուրախ լուր կայ ինձ համար։

Ն Ա Մ Ա Կ ։

Լաւ կը կարգաս գրածներս,
Որդի Աղամ Յարութիւնեանց.
Քեզ պահապան իմ սրբերս,
Որդի Աղամ Յարութիւնեանց:

 Ուրախութիւնդ լսեցի,
Ինքս ինձ ուրախացի.
Մայր աթոռին ինդրւեցի,
Որդի Աղամ Յարութիւնեանց:

 Անինկան սրտով սիրել ես,
Հօրը տանից ըերել ես.
Ուրախութիւնդ արել ես,
Որդի Աղամ Յարութիւնեանց:

 Զարմանալի է բաներդ,
Անինկի հետ ընկաւ սէրդ,
Ինչպէս մարդ է քո հաներդ,
Որդի Աղամ Յարութիւնեանց:

 Անինկին շատ բարե կանես,
Իմ տեղակ դու ձեռքը բռնես.
Մայկոյից համբոյր կառնես,
Որդի Աղամ Յարութիւնեանց:

 Աշուղ Առաքելին սիրես,
Ամեն օր դու միտդ ըերես,
Սիալ գրածս կներես,
Որդի Աղամ Յարութիւնեանց:

Ն Ա Մ Ա Կ ։

Կարելի է իմ ճակատիս գիրն է,
Իմ ծեր վախտս պէտք է քեզանից ջոկ ապրեմ.
Չեմ իմանում այս անեծքը ումն է,
Առանց ընկեր, օտար տեղում ես տանջւեմ:

 Զար խօսողը կամ Զաւին է, կամ Եղարը,
Կամ Սապին, կամ Ամնամը, կամ Նուբարը,
Հերիքն է կամ Շահլոյք, կամ Դիլբարը,
Յոյս ունեմ, ինձ գրած խօսքը կը ջնջեմ:

 Առանց ընկեր, դու լաւ կապրես կիմանամ,
Կարգն ասա, գուցէ ես էլ գիմանամ.
Ծածուկ ցաւս ապա ես ում հետ բանամ,
Ասիր տեսնեմ, առանց ընկեր հնց ապրեմ:

 Իմ մին օրս անց է կենում մի տարի,
Մին տարումը շատ կայ չար և բարի,
Թել կոտրած դուշ եմ, այնպէս համարի,
Մնացել եմ գետնին, չեմ կարում թռչեմ:

 Զի կարծես թէ ես քո սէրդ մռոացամ,
Պառաւ վախտս, ես քեզանից հեռացամ.
Ելս եմ քաշում հանեղի պէս կոացամ,
Երբ կլինի մէկ էլ ձայնդ կլսեմ:

 Աշուղ Առաքելն եմ, գրում եմ նամակ,
Նամակս կը կարգաս, դու առնես փափակ.
Զակազնոյ եմ գրում, ոչ թէ հասարակ,
Պատասխան գրիր, ես լաւ կը կարգեմ:

ՄՈՒԽԱՄՄԱՋ.

Աստուծոյ խնամքը հասաւ,
Քեզ համար Խուբլարեան իւան.
Աստուած ինքը բարեխօսաւ,
Քեզ համար Խուբլարեան իւան.
Փակւած դռները բացւաւ,
Մեզ համար Խուբլարեան իւան:

Դու ես սեր Շուշի քաղաքի,
Գլխին դրած կարմիր թագը.
Կուրացել են Շուշւայ միջի,
Այն առաջւայ փայյուն փառքը,
Բարեխօս է մեր սուրբ կարգը,
Քեզ համար Խուբլարեան իւան:

Աստուած քեզ մեզ նորին տւաւ,
Մեռածները կենդանացաւ,
Բոլոր մհալը ուրախացաւ.
Որ քո փակւած դուռդ բացաւ,
Մեզ համար Խուբլարեան իւան:

Խուբլարեան իւանը դու ես,
Շուշւայ աստիճանն դու ես.
Հայ քաղցը բերանն դու ես,
Իսկ հայերի բերանն դու ես.
Աստուած քեզի չարաւ անտես,
Մեզ համար Խուբլարեան իւան:

Քսան հինգ որ բազբօրդ,
Կեանքով լինի թագաւորդ,
Որ քեզ բախչեց հօրդ մօրդ,
Հանեց քո բանապեկի շորդ,
Ուրախացան եղբայրներդ,
Քեզ համար Խուբլարեան իւան:

Կանաչ կենայ ատվակատդ,
Հեռացրուց կեղտոտ սուտդ,
Զի թողեց, որ քանդկի պատդ,
Մեզ մօտ մնաց անուշ հոտդ,
Բաշում էինք քո կարոտդ,
Քեզ համար Խուբլարեան իւան:

Արժան գնաց հացդ, աղդ,
Նմանապէս գումար փողդ,
Թող կանաչի խաւար բաղդ,
Իստակ բան անի արաղդ,
Բարեխօս է արարողդ,
Քեզ համար Խուբլարեան իւան:

Նման էր Յովսան մարգարէին,
Բանդարկւած ձկանը փորին.
Աղօթք մաղթեց երեք օրին,
Չուկը փչեց չոր ափերին.
Խնդրւեցի ես այն Տէրին,
Քեզ համար Խուբլարեան իւան:

Տես Գրիգոր Լուսաւորչին,
